

ՊԱՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնադույն ժամանակներից ոկոած յուրաքանչյուր համայնք բաժանվել է խմբերի, որոնց համար հիմք հանդիսացել է սեան ու տարիքը: Ըստ սեռի ու տարիքի կազմվող խմբավորումները հիմնականում հինգն են՝

1. Երեխաների՝ տղաների ու աղջիկների.
2. Պատանիների կամ շամուսնացածների.
3. Ամուսնացած երիտասարդ աղամարդկանց ու կանանց.
4. Որիցին աարիքի տղամարդկանց ու կանանց.
5. Մերունիների ու սլառավ կանանց:

Այս սկզբունքով կազմված երկու սեռերի տարբեր հասակային խմբեր ու միություններ գոյություն են ունեցել բոլոր համայնքներում, ցեղերում, ցեղային միավորումներում, ապա և ժողովուրդների մեջ: Հայաստանի աարբեր շրջաններում ես գոյություն են ունեցել քս¹ տղամարդկանց և թե² կանանց հասակակիցների միություններ, հասակային ընկան բաժանմամբ: Հասակակիցների միություններ գոյություն են ունեցել՝ Անիում, Վանում³, Երզնկայում⁴, Շառախում⁵, Նուր Նախիջևանում, Վասպուրականում, Հայոց

ծոռում, Արթիկի շրջանում⁶, Ուկրաինայի, Լեհաստանի և այլ հայկական դադուքներում⁷:

Հայոց լեզվում պահպանված շատ տերմիններ սեռա-հասանային միությունների գոյությունը հառաատող հիմնական վկաներն են: Դրանք են երիտասարդանոց⁸, նստսւրան⁹, ժողովաւան կամ ժողովետոլ¹¹, Ավետիսի տուն¹², կտրինվաւաց եղբայրություն¹³, ժողովաւաւի տուն¹⁴, օղա նստել¹⁵, մանկտավաւ¹⁶, պաաանեկապետ, ալաւգ քաւր¹⁷, Մէֆիթ աղասի¹⁸, իգիթ կամ ջրգիթ քաւր¹⁹, խաղալաւ²⁰ և այլն:

¹ Србуи Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, том II, Ереван, 1973, стр. 88—113.

² Վ. Գրիգորյան, նշվ. հոդված:

³ Բաողիրք Հայկազեան լեզուի, Մխիթարայ մեծի աղբայի, հ. 1, Վենետիկ, 1749, էջ 254:

⁴ Նոր բաողիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. 2, էջ 454, այսուհետև ՆՔԸԼ և Ջավախքում մեր կողմից գրանչած նյութեր:

⁵ Բաողիրք Հայկազեան լեզուի, Մխիթար արրայի աշակերտներ, հ. 4, Բաողիրք ի գրարաոէ աշխարհարաոն, Վենետիկ, 1769, էջ 152:

⁶ Փաւրջեյան, Նոր Նախիջևանի հայկական գյուղների կարիքների միությունների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1966, № 3, էջ 185 և Խ. Փաւրջեյան, նշվ. աշխ., էջ 18:

⁷ Խ. Փաւրջեյան, նշվ. աշխ., էջ 180:

⁸ Վ. Գրիգորյան, նշվ. հոդված, էջ 118:

⁹ Ջավախքում մեր կողմից գրանչված նյութեր:

¹⁰ Ս. Ս. Մալխասեան, Հայերեն բացատրական բառարան, այսուհետև ՄՀԲԲ. Երևան, 1945, էջ 254:

¹¹ Վ. Գրիգորյան, նշվ. հոդված, էջ 124:

¹² Խ. Փաւրջեյան, նշվ. աշխ., էջ 188:

¹³ Լ. Խաչիկյան, նշվ. հոդված, «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 80:

¹⁴ Խ. Փաւրջեյան, նշվ. աշխ., էջ 80:

¹ С. А. Токарев, Ранние формы религии, М., 1964, էջ 332—346.

² Վ. Գրիգորյան, Արեւմտյան Ուկրաինայի հայկական դադուքների սկտրիվորաց եղբայրությունների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 116:

³ Անդ, էջ 123 և Լ. Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում կազմակերպված «Եղբայրություն», «Տեղեկագիր», Երևան, 1951, № 12, էջ 73:

⁴ Ст. Лисициан, Историко-этнографические очерки Шатаха, Известия Кавказского Историко-археологического инст., Тифлис, 1927, т. V, էջ 80—83:

⁵ Խ. Փաւրջեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանայություն, Երևան, 1965, էջ 17:

Գրավոր²¹ ու բանավոր շատ անդեկություններ ապացուցում են, որ հասակակիցների միություններն իրենց նախնիներից ժառանգություն ստացած պաշտամունքային, տոտեմական, ծիսային, կախարհական, հմայական, վիպական, ռազմական, քնարական և այլ տեսակի պարերն ու թատերական դործողություններն իրար սովորեցնելու²², ապա և սերունդներին փոխանցելու հիմնական օջախներն են եղել²³:

Հասակակիցների միություններն ինչպես հնում, այնպես և վերջին հարյուրամյակում կազմակերպել ու ղեկավարել են թատերական գործողություններ, Ղեյնօբաներ, կառնավալներ, վարդապետներ, հարսնականների միություններն են, որ ձևավորել են թատերական տարբեր կենդանիների, մարդկանց ու երեւակայական էակների կերպարներ, ապա իրենց մասնակցությամբ իմաստավորել հասարակական հանդեսներն ու տոները: Տարվա հատուկ օրերին այս կամ այն դյուլից, քաղաքից հրավիրել են սավերների թատրոն ներկայացնողներ, լարախաղացներ, ռորշումարտիկներ, հեքիաթասաց գուսաններ (աշուղներ) և այլն:

Հայաստանում հասակակիցների միությունների վերապրուկները պահպանվել են մինչև մեր օրերը: Այդ հարցում պահպանողական է հատկապես Արևմտյան Հայաստանը:

Ազդային-ազառազրական շարժումների ժամանակ հասակակիցների միությունները հանդիսացել են ռազմական ուժի կենտրոնացման, կազմակերպման և մշտապես պարասա ռազմական ուժ ունենալու օջախներ²⁴:

Հասակակիցների միություններում ավանգական սովորություններն ու առօրյա երևույթները գնալով նոր իմաստավորում և նոր երանգներ են ստացել:

Ջավախքում ես հասակակիցների միությունների համար հիմք են դարձել սեռա-տարիքային բաժանումները:

1. Տղա՝ երեխա, մանչ ու ախլիզ:

²¹ Գրավոր տեղեկությունները նշված դրականության մեջ: Տե՛ս նաև Ա. Մեացակաճյան, Հայկական զարգարվեստ, Երևան, 1953, էջ 302, 389—393, Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1941, հ. 3, էջ 156:

²² Լ. Խաչիկյան, Մաթթոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը, Ռեաների մատենադարանի, Երևան, 1956, № 3, էջ 81, Խ. Ա. Փաբջյան, նշվ. հոդված, էջ 185:

²³ Լ. Խաչիկյան, Հայկական զաղութները Ուկրաինայում XVI—XVII դդ., «Տեղեկագիր», Երևան, 1954, № 4, էջ 53:

²⁴ Տե՛ս Վ. Ռոյսյան, Հայ ժողովրդական խաղեր, Երևան, 1963, հ. 1, էջ 23:

2. Քարսալա²⁵ ջահիլ՝ պատանի:

3. Ջահիլ՝ երիտասարդ: Երիտասարդները բաժանվում են երկու ենթախմբի՝ ազարների ու ամուսնացածների, որը կարեոր էր միությունների կազմակերպման հարցում:

4. Հասած մաբդ՝ մինչև հիսուն տարիք ունեցող տղամարդիկ և կանայք:

5. Էխախար՝ ծերունի: Հիսուն տարեկանից մեծ տղամարդիկ և կանայք²⁶:

Ջավախքում մինչև այժմ պահպանվել են նաև սովորություններ, որոնք հաստատում են հասակակիցների միությունների գոյությունը նախաքրիստոնեական ժամանակներից: Երրուկների, միջահասակների, երիտասարդների, կանանց ու աղջիկների խումբ-խումբ հավաքվելը հենց հասակակիցների միությունների ըստ սեռերի բաժանման ու կազմավորման հնազույն ավանդության մնացորդն է: Ծիշո է, սովորութեական իրավունքով կազմվող այս խմբերն այլևս տնտեսական ու քաղաքական այն դերը չեն կատարում ինչ հնում, սակայն որոշակի ուժ և հեղինակություն են վայելում: Այսպեղ առանձնապես լավ են պահպանվել ծերունիների և ազաբ երիտասարդների միությունները: Ախալքալաքի շրջանի՝ Ալաստան, Խանդո, Մեծ ու Փոքր Սամսարներ, Մեծ Խանչալի, Կտրծախ, Ախալցխայի շրջանի՝ Մուղրուա, Սուֆլիս, Մղալթրիլա, Բոգդանովկայի շրջանի Գանձա²⁷ և այլ շատ գյուղերում այժմ էլ չեն մոռացել նստաբան էրթըլու, օղա կամ սաֆի նբստելու սովորությունը: Երիտասարդ տղաներն ու աղջիկները մեծ հաճույքով են գնում մաճի, թըմբօց կամ ուլսա: Ահա այս երևույթների ուսումնասիրությունն է, որ հանգեցնում է որոշ եզրակացությունների:

ա. ՏՂԱՄԱՐԴԱՆՑ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն ս տ ա բ ա ն , օ դ ա կ ա մ ս ա ֆ ի ն բ ու տ է լ .—Ջավախքում ծերունիների հասակակից-

²⁵ Քարսալա—պարսկերեն խակ, չհասունացած բառից:

²⁶ Տերմինները դրանցիկ են Ախալքալաքի բնակիչներ՝ Ա. Պողոսյանից և Սամսրցի Արուից: Տերմինները մինչ օրս Կործածության մեջ են:

²⁷ Հասակակիցների միությունների մասին անդեկությունների հաղորդել են՝ Ախալքալաքից՝ Ա. Պողոսյանը, Խանդոյից՝ Եղոյանը, Ա. Թումասյանը, Խ. Թումասյանը, Ալաստանից՝ Գ. Դարբինյանը, Մեծ և Փոքր Սամսարներից՝ Ա. Դավթյանը, Գ. Դավթյանը, Ախալցխայից՝ Կ. Բալոյանը, Մուղրուայից՝ Մ. Սաֆարյանը, Մղալթրիլայից՝ Զ. Պողոսյանը, Սուֆլիսից՝ Մ. Իզիթրաշյանը, Գ. Իզիթրաշյանը, Գանձալից՝ Կ. Վարձալյանը և ուրիշներ:

ների միութունները ինչպես հնում, այնպես և այժմ կոչվում են Նստաբան-ներ²⁸։ խոսակցական լեզվում ավելի շատ դործածվում է սնֆի²⁹ կամ օղա նստել։ Երկուսն էլ նույնիմաստ են նստաբան տերմինի հետ, իրար հետ խոսելիս ասում են՝ էր-թանֆ գօմի օղեն։ սաֆի նստելու³⁰։

Օղան դոմին կից սենյակ է, որտեղ աչրում են ձմռանը, Սնֆին օղայի մի մասն է. սնֆի տերմինը հաճախ տարածվում է և օղայի վրա։

Ամեն տարի տղաներ մի պատվավոր դյուղացու օղա-ն տարերալսուհին դարձել է հավաքատեղի աչո կամ ալն քսոյի՝ սայլի կիստիար ողամարդկանց համար։ Թողից մեկը հարևաններին հրավիրել է իր օղան զրուցելու։ Դրանից հետո նույն օղան դարձել է ամենօրյա հավաքատեղի։ Հնում հավաքատեղի նստաբան-օղան որոշվել է հատուկ հավաքույթով և ամեն տարի չի փոխվել։ Ին հնում ե թե հիմա օղան պետք է պատկանի պատվավոր մարդկանցից մեկին։ Նրա դյուղը մեծ էր կամ քաղաքում թաղերը շուրջ էին. ապա մեկ թաղից մյուսը դնալը ուրիշ թաղի նստաբան-օղայի տեղում դառնալը, դիմել է որպես անհարմար երևույթ։

Թե՛ հնում և թե՛ հիմա դրանք ու ամոսները րաջօթյա հավաքները սակավաթիվ են եղել։ Աշնանն ու ձմռանը ծնունդները հավաքվել են՝ թաղի ձիթանֆներում³¹, գօմերում³², գօմի օղաներում. իսկ քաղաքներում՝ նաև աբնեստանցներում ու ղէյֆէխանէներում³³։

Ջավախքում էյստիար հասակակիցների միությունները՝ նստաբանները, խաղացել են ծերունիների խորհրդի դեր, և ունեցել հատուկ նշանակություն, գործունեության հատուկ ձև ու ծրագիր։

²⁸ Նստաբան անունը կազմվել է նստել բայից, որ նշանակում է եսև նիսա կազմել մի գործի համար. ՄՀԲԲ, էջ 478։

²⁹ Սնֆի—թուրքերեն *seki* բառից, որը նշանակում է նստարան, հասակից ավելի բարձր տեղ նստելու համար։ Թուրքերեն բառերի բացատրության համար դործածում ենք *Д. А. Магазаник, Турецко-русский словарь, М., 1948*։

³⁰ Մուրում—Մ. Սաֆարյան։

³¹ Ձիթանֆ—Ձիթանֆ, Ձիթանֆ, Ձիթանֆ, Ձիթանֆ—երանոց-դործարան կամ տուն, ուր մեծահերան մեքենայով նմանով կտաւոր՝ ձեթ հանեն ալեգրեմէ։ Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 416։

³² Գօմերում տեղի էր ունենում բաղամարդ հավաքները, երբ այցելության էին գալիս զուսաններ, ներկայացումներ տվող խմբեր և սովորների թարգման խաղացողներ (տե՛ս նկ. 1)։

³³ Ղէյֆէխան—սրճարան, արարերներից ղէյֆէ—սուրճ, խանա—տեղ բառերից։

Նստաբաններում ընտրվել է ղեկավար, նախագահ կամ նման մի պաշտոնյա, որը մեծ հեղինակություն է վայելել։ Ավանդական կարգով հիմա էլ Նստաբաններում ծերունիներից ամենախելոքը, փորձառուն ու հարգվածը բոլոր հարցերում իր վճռական կարծիքն է հատնում, որը մեծ մասամբ ընդունվում է։ Հավանաբար հնում այդ պաշտոնն ունեցել է համապատասխան անուն որոշված ու ճշգրիտ պարավորություններ։ Ծերունիների միության անգամ լինելու համար նշանակություն է ունեցել միայն տարիքը։ Մասնագիտությունն ու զբաղմունքը ինչպես հնում, այնպես և ավելի ուշ, կարևորություն չեն ներկայացրել։

Բոլոր տարիքի կանանց ու երիտասարդ տղամարդկանց արգելվել է մանկ ծերունիների նըստաբան—հավաքատեղիները։ Արգելքը (*tabou*) մինչև հիմա պահպանվել է։ Հավաքատեղի մուտքը ամօթ է համարվում, իսկ մտնողին նախատում են³⁴։

Հավաքների ժամանակ պահպանվել է խիստ կարգապահություն։ Մասնակիցները նստել են սովորական կարգով՝ որքան տարիքով, այնքան դեպի վեր՝ օջախին մոտ³⁵ (կամ բուխէրիկ) (տե՛ս նկ. 2)։

Պաահականորեն ժամանած կամ հատուկ հրավիրված հյուրը համարվել է պատվավոր, և նրան տեղ է հատկացվել օջախի մոտ, տանտիրուց կողքին³⁶։

Բոլոր հարցերում միության անգամները եղել են հավասարադոր իրավունքների անբխոսելի և սովորական կտրգով։

Հավաքների նպատակը եղել է՝

1. Քննել բոլոր հարցերը, որոնք վերաբերել են՝ ամբողջ գյուղին կամ քաղաքին, տվյալ թաղին և յուրաքանչյուր գյուղացուն կամ քաղաքացուն։

Տվյալ Նստաբանի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր անգամ պարտավորվել է՝

1. Պատասխանատու լինել միության ամեն մի անդամի, ապա և ընդհանուրի համար։

³⁴ Ղեկավարի անվանումը կամ տերմինը մոռացվել է։

³⁵ Ահատան գյուղից Գ. Իսրայելյանը պատմում էր, որ իր կրասեր եղբայրը երիտասարդ ժամանակ (20-ական թթ.) ցանկացել է մտնել նստաբան և որովհետև այդ ամօթ է համարվել, ապա որոշել է օյին խաղալ։ Վերցրել է զոռ, հանել նրա միջուկը, ալքեր, քիթ ու բերան կարել նրա վրա. հետո մոմը վառել, դրել դռամի մեջ։ Դրումը կախել է ձիթանֆի երգիկից ներս։ Ծերունիները վախեցել են, և Հավաքը խանդավել է։

³⁶ Ջավախքում օջախ ասում են բախէրիկին։

³⁷ Ախալքալաք՝ Շ. Պողոսյան։

2. Պաշտպանել և օգնել նրանց վտանգի, անհաջողության կամ դժբախտության դեպքում³⁸:

3. Եթե միութեան որևէ անդամի պատվի դեմ տենձգություն է արվել, պաշտպանել նրա պատիվը:

4. Մասնակցել սմեն տեսակի անտեսական, բարոյական, ծիսային, տոնական, պարային, թատերական և այլ հարցեր քննարկող հավաքներին:

5. Հատուկ վերադաս մարմինների հետ միասին լուծել ընդհանուր, ինչպես օրինակ հողի բաժանման, կամուրջների, սղջուրների, տների, խոտարակական շենքերի կառուցման և այլ հարցեր:

Բացի այդ հարցերից, հավաքների մշտական առիթ են հանդիսացել կաղամկերսլտկուն աշխատանքները:

Հարսանիքներին, տոներին ուխտատեղեր՝ դիրի ղնալու, թաղումներ, ներկայացումներ ու տոնախմբություններ կաղամկերսլտկուն հատուկ հավաքներ են հատկացվել: Այսպիսի դեպքերում, որպես անձամբ գործողներ, ծերունիների նստաբանին՝ խորհրդին մասնակցել են նաև երիտասարդ տղամարդկանց միությունների ներկայացուցիչները³⁹:

Նստաբաններում քննվել են նաև ուղղական ու քաղաքական հարցեր: Նստաբանները կարևոր օղակներ են հանդիսացել համայնքի, գյուղի կամ քաղաքի հասարակական ու տնտեսական կյանքում:

Հետագայում ծերունիների միությունները կորցրել են իրենց հեղինակությունը: Նրանց պարտականությունները փոխանցվել են երիտասարդների միություններին, որոնք ստացել են նաև ծերունական հովանավորությունն ու խորհուրդները:

Ծերունիների նստաբանները վերածվելով ավանդական հավաքաանդերի, այնուամենայնիվ, ինչպես հնում, այնպես էլ այժմ հանդիսանում են դիտելիքներ ձեռք բերելու, հեքիաթներ, զրույցներ, երգեր լսելու, ժողովրդական ներկայացումներ դիտելու և տեղական կյանքի հետ կապված որոշ հարցերի մասին զրուցելու վայրեր:

* * *

Ինչպես Հայաստանի տարրեր աղգազրական շրջաններում, այնպես և Զավախքում ամուսնա-

³⁸ Խանդո՝ Ա. Թումասյան:

³⁹ Այսպիսի հավաքներին երիտասարդ ներկայացուցիչներին նույն չի թույլատրվել: Նրանք կանգնել են մուտքի ստալ:

ցած և շամուսնացած երիտասարդների մեջ խիստ բաժանում է մտցվել:

Քանի գեռ տղան ազաբ է, գտնվել է ազաբներին խմբի մեջ: Ամուսնանալուց հետո հեռացել է⁴⁰. նույնիսկ ամենամտերիմ ընկերներից: Ամուսնացած երիտասարդները մեծ են առանձին խմբավորման մեջ:

Զավախքում ամուսնացած երիտասարդ տղամարդիկ մասնակցում են բոլոր այն դարձերին ու կրում այն պարտականությունները, ինչ ազաբ երիտասարդները:

2. Ազաբների «դա կամ նստաբան. ինչպես Լիտվա Լեիդ-մարգիլ, այնպես և Զախիլ-նեյր առաջներում ունեցել են իրենց մշտական հավաքատեղին՝ երիտասարդական օղան⁴¹:

Սուֆիս պաղում՝ տօրի ճիմի մալի Բօլլ նըստաբան կա Զախիլ-նեյրի համար⁴²:

Ազաբների միությունների համար հավաքատեղի դառնել են այն օղաները, ուր ծերունիները կրեք չեն հավաքվել: Նույն նպատակին ծառայել են այն դամերն ու թոնրատները, որոնք չհրադեցրած կանանց միությունների կողմից:

Աղաբների ամեն մի միություն ունեցել է դեկավար-կաղամկերսլտ, որին բոլորը հարգել, լսել ու ենթարկվել են: Միության անդամների ինքնակամ հեռացումն արգելվել է: Յուրաքանչյուր անդամ պաասսխանատու է եղել հասարակության առաջ իր խմբի մյուս անդամների վատ կամ լավ արարքների, վարքի, պատվի ու կենցաղային դժվարությունների համար:

Հանցանքների համար որոշվել են պատիժներ: Միությունից հեռացնելը համարվել է ամենախիստ ու ծայրագույն պատիժը⁴³:

Ազաբներն իրենց օղաներում հավաքվել են ժողովների, քեֆերի և հատուկ խորհրդակցությունների, որոնց ժամանակ ծանոթացել են հոգևոր կուլտուրային: Ազաբների օղաներին կից տանը կամ որևէ սենյակում պահվել են հա-

⁴⁰ Այդպես է և կուրախիների մոտ: Ամուսնանալուց հետո երիտասարդը դուրս է եկել ազաբների միությունից: Լ. Մ. ՄԱԼԱՍԿԵ, նշվ. աշխ., էջ 175:

⁴¹ Զահեյների առանձին հավաքատեղիների դոյություն մասին տեղեկություններ հաղորդել են՝ Ալասաանից՝ Զ. Մածուրյանը, Խանդոյից՝ Ա. Նդոյանը, Սուֆիսից՝ Գ. Իդիթրաշյանը, Մուղրուտից՝ Մ. Սաֆարյանը, Մղաթիսից՝ Պողոսյանը, Մ. Պողոսյանը, Գանձայից՝ Կ. Վարձեյանը:

⁴² Սուֆիս՝ Գ. Իդիթրաշյան:

⁴³ Ինչպես և կուրախիների մոտ, Լ. Մ. ՄԱԼԱՍԿԵ, նշվ. աշխ., էջ 172:

զուստներ, տարրեր կերպարների գիմակներ, նետեր, նիգտկներ, վահաններ, հատուկ պատրաստված զլխագարդեր, դրոշակներ, ներկեր, ամաններ և զործածության շատ իրեր, իրենց պաշտոնական և թատերախաղերի համար: Ազաբներ ի սնունդի անհամեմատ պարասականություններն էին՝

1. Լճերներից, երբեմն էլ հատուկ հրավիրված մարդկանցից՝ սովորել՝ ավանդություններ, հեքիաթներ, զրույցներ, երգեր ու պարեր, ասպաղիացած սովորեցնել ուրիշներին:

2. Տարեկան տոներին, հարսանիքներին, ուխտաանդերում ավանդական հագուստներով, գիմակներով՝ համապատասխան գերելում հանդես գալը:

3. Ռաբլեդանհին, Ջադկին, Հաբանցը, դարնանային ու աշնանային տոներին, մեղեցոցներին, կիրազի օրերին յուրաքանչյուր պետք է մասնակցեր՝

ձևափոխություն, գիլաշին, ձիարշավներին ու ձիախաղերին՝ Ջիլիլին (մականախաղ), մրցումներին, որոնց մասնակ երիտասարդները գրեթե ինքն իրենց ֆիզիկական կարողությունները, ճարպկությունն ու սպորտային ընդունակությունները: Միության ամեն մի անդամ ամենօրյա վարձություններով պարտավոր էր ընթացիկ կերպով մարզական ունակությունները⁴⁵:

4. Ազաբների միության բոլոր անդամները պարտավոր էին մասնակցել թաղումներին՝

կազմակերպել նյութական օգնություն հանգուցյալի ընտանիքին. նախապատրաստել ու դեկավարել թաղման բոլոր պարողությունները (ննջեցյալին տեղափոխել ամանից եկեղեցի, եկեղեցուց՝ գերեզմանատուն)

Հանգուցյալին գերեզմանատուն ուղեկցելուց հետո սպասարկել ճօղճացի⁴⁶ սեղաններին:

5. Ազաբների միության ամեն մի անդամ պարտավոր էր միության մյուս անդամներին օգնելու անային, դաշապին և առհասարակ բո-

⁴⁴ Ախալցխա՝ Պ. Կուրբանյան, Վարդանյան, Աուֆիս՝ Գ. Իգիթրաշյան:

⁴⁵ Ախալցխա՝ Պ. Կուրբանյան, Մ. Կուրբանյան, Ալաստան՝ Գ. Դարբինյան, Գանձա՝ Կ. Վարձելյան, Սուղրուտ՝ Խ. Կուլագյան, Խանդո՝ Ա. Թումանյան, Ա. Թումասյան, Մ. Սամսար՝ Ա. Թորոսյան, Սուֆիս՝ Հ. Իգիթրաշյան: Գրականության և արվեստի թանգարան, այսուհետև ԳԱԹ, Մ. Փամայանի ֆոնդ, 1-ին, 18, «Փայլեան Եղիկ» Հ. Մալխասյանի արխիվ, № 89, «Հայ գեղարվեստի արվեստ», մաս Գ., 1930 թ.: Նման սովորություն պահպանվել է և կուրաշխների մոտ, E. M. Միլլինգ, նշվ. աշխ., էջ 177:

⁴⁶ Սուղրուտ՝ Մ. Սաֆարյան:

լոր աշխատանքներում: Ընկերովի իրար օգնելը՝ մեծի գնալը անքան է մտել կենցաղի մեջ և այնքան լայն ընդունելություն է գտել, որ պահպանվել է մինչև մեր օրերը:

Օգնելու շարժում⁴⁷ էնելու սովորությունը համայնական կարգերից պահպանված հետաքրքիր երեխայիցներից մեկն է: Խոսակցական լեզվում զործածվում է՝ Լեթան մանի, լարդում էնելու: Յարում Լիլը կամ մանի Լեթալը փոխադարձ օգնություն է, որը ցույց է տրվել հիմնականում հանելալ աշխատանքներում՝ կարտֆիլի, եգիպտացորենի արմատների հողը փորելուն՝ չափա էնելուն, հնձելուն, ցանելուն, արօր վարելուն, խօղ ֆաղելուն, պուլուլ⁴⁸ էնելուն, պաղ շարելուն ֆաղ էնելուն, տուն շինելուն, Լեթիգը հողելուն և այլն:

Այս գործերն համարվել են ջանել սղամարդկանց պարասականություններ և կրել մանչերու մանջի⁴⁹ ընդհանուր անունը:

Փոխադարձ օգնությունն ունեցել է հասարակական նշանակություն: Մանչերու մանջի կուլտոս գործերին և նրանց հաջորդող պարերին հաճախ մասնակցել են և բարեկամ, ազգական ու հարեվան աղջիկները:

Տղամարդկանց փոխադարձ օգնության գործերից ամենատարածվածն ու գրեթե պարտադիրը համարվել է Լեթիգ հողելը, հողանք էնելը կամ հեթիգը հող գցելը⁵⁰:

Սովորաբար Լեթիգը հող գցելն ավարտվում է մեծ խնջույքով: Տան անբր դառ, ուլ, երբեմն նույնիսկ օլխառ է մորթում⁵¹: Կերուխումի ժամանակ անպակաս են երգերը, պարերն ու մասխառկայությունները⁵²:

⁴⁷ Yardim—Թուրքերենից, օգնություն, աջակցություն:

⁴⁸ Պուլուլ—բուլուլ, խոսի խորձ կամ փորը կուլուլ:

⁴⁹ Մանչերու մանջի նշանակում է երիտասարդ տղամարդկանց գործ, զործածել:

⁵⁰ Լեթիգը հողել, նոր կասուցված աան կսուրը հողով ծածկել: Տարածված սովորություն է Ախալցխայի և Ախալցխայի բոլոր հայկական գյուղերում: Մինչև այժմ պահպանվել է Ալաստան, Մեծ ու Փոքր Ամասարներ, Խանդո, Սուֆիս, Սղաթրիլա, Սինուրան, Սուղրուտ գյուղերում: Այս մասին տեղեկություններ կան նաև գրականության և արվեստի թանգարանում՝ Հ. Մալխասյանի արխիվ, № 88 ր, մաս Գ, 1910:

Հողանք անելը պարտադիր պարտականություն է յուրաքանչյուր նոր կառուցվող աան համար: Այն համրեկնում է համայնքի անդամին տուն՝ օլխա հատկացնելու օրենքի հետ, իսկ դառ, ուլ կամ ոլխար մորթելն է հավանաբար զոհ մատուցելու հնագույն կրոնական ծեսի մնացորդ:

⁵¹ Եղել են նաև ել մորթելու զեպքեր:

⁵² Մասխառկայություն—Խալսերեն masquera բառից, մասխարա, ծաղրածու այսպես կատակ, maskara գործածվում է սրարերենում և թուրքերենում:

Ազգաբների միությունների անդամները եղել են երգերի, պարերի, թափափական գործողությունների, մրցումների ու խաղերի, քաղաքացիական ֆառակովների⁵³ աղդանշան տվողները, սկսողներն ու հիմնական անցկացնողները:

Տղամարդկանց հասակակիցների միություններից ընտրված հատուկ խմբեր կրել են դատավորի պարտականություններ:

Անցած գարասկզբին, յուրահատուկ պայմաններում վերակառուցված և հիմնական մասով նոր կառուցված Ախալքալաք և Ախալցխա քաղաքները առանձնահատուկ են երիտասարդ տղամարդկանց միությունների հարցում: Հիմնականում արհեստավորական այս քաղաքներում ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքում որոշակիորեն գործող կենտրոններ են դարձել համաքաղաքայինները⁵⁴:

Արհեստավորների միությունները՝ համաքաղաքայինները, աստիճանարար իրենց ձեռքը վերցնելով քաղաքի տնտեսությունը, ներգրավել են տղամարդկանց հասակակիցների միությունների գրեթե բոլոր անդամներին: Այնուհետև ընդգրկելով քաղաքի բոլոր կաղմակերպությունները, համաքաղաքայինները ձեռք են բերել այդ պաշտակերպությունների իրավունքները և դարձել միասնական, աղդեցիկ մի նոր կենտրոն⁵⁵, միությունների պարտականություններով:

Ստեղծված նոր պայմաններում այսպիսի կաղմակերպության նշանակությունն ավելի մեծ է եղել, քան ավանդույթային ուժով պահպանված հասակակիցների միությունները: Մանավանդ որ շուտով արհեստավորական կենտրոնները դարձել են նաև աղգային-աղաաաղրական պայքարի օջախներ⁵⁶:

⁵³ Զավախքում հայտնի է թաղերի մեջ անդի ունեցող ֆառակովներ և առանձին մարդկանց կողմից կազմակերպված խաղ-կռիվներ, որոնց ժամանակ ամբողջ գյուղը կամ բազմաթիվ համայնքներ էլ նայելու Տեղս և ԳԱԹ. Շահանի ֆոնդ, 11, Ախալցխա, 1895—96, էջ 17, 18:

⁵⁴ Արհեստավորների միություն եղբայրությունների ներքո նրանց սկզբնավորման օրից ստեղծվել էին հատուկ ձեռքեր ու պարեր, սկզբում հմայական, հետագայում աշխարհիկ-խնջուղային նշանակությամբ, որոնց շարժումները սովոր արհեստին համապատասխան նմանողական շարժումներն էին:

⁵⁵ «В развнтном классовом обществе мужские союзы, как правило, сохраняются лишь пережиточно в виде разного рода клубов, религиозных братств, ремесленных гильдий и т. д.», Ю. В. Андреев, Мужские союзы в доиндустриальных городах-государствах. Автореферат, Л., 1967, стр. 7.

⁵⁶ Հյուսիսային Ամերիկայի, ապա և Աֆրիկայի ու Ասիայի արևմտյան որոշ շրջաններում բազմաթիվ միու-

կարճ ժամանակից հետո բոլոր տեսակի հարցերի հավաքաձեռներ են դարձել համաքաղաքային հատուկ անհրաժեշտություններ, որանդ սկսել են քննել նաև քաղաքում կառուցվածքներ, վարդապետներ, երթուղիներ, խաղեր ու մրցումներ կազմակերպելու վերաբերող հարցեր: Նրանց որոշմամբ հրավիրվել են նաև լարախաղացներ, ըմբշամարտիկներ, «Ղաթագոզ» խաղացողներ և այլն:

Համաքաղաքայիններն իրենց մասնակցությունն են ունեցել ժողովրդական տոներին, հարսանիքներին⁵⁷, թաղումներին և այլ հասարակական ու ընտանեկան դեպքերին:

Համաքաղաքայինների դերն հետզհետե տյնքան է մեծացել, որ առանց նրանց չի վնասվել քաղաքի տնտեսական, հասարակական, երրեման էլ նույնիսկ քաղաքական կյանքին վերաբերող հարցեր: Նստաբան, ապա և Ազգաբների օղա հասակակիցների միությունների հիմնական պարտականությունների կատարողները քաղաքներում դարձել են համաքաղաքային կաղմակերպություններ, որոնց ընկան մրցումային հետևանքով ավելի են աշխուժացել ինչպես կառուցվածքներն ու վարդապետները, այնպես և մրցումները, ժողովրդական տոներին անդի ունեցող թատերական գործողությունները:

Բ. ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱԿԱԿԻԳՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միջին առերիկ և ավելի մեծ կանանց միություններ.— Զավախքում կանանց մեծ գոյություն են ունեցել հասակակիցների առանձին խմբեր:

Թաղի բոճաբաններից մեկը՝ սովորաբար սղամարդկանց նստաբան օղային կից բոճաբանը դարձել է գյուղի, գյուղակեսի կամ տվյալ թաղի հավաքաձեռին:

Մեծահասակ, միջահասակ, աշխատանքի ընդունակ կանանց մոտ պահպանվել է միայն իրտր օգնելու սովորությունը, որը Զավախքում կոչվում է կնիգմարդոց մմջի:

Քյունները (հասակակիցների) գրեթե մինչև վերջերս իրենցից մեծ քաղաքական ուժ էին ներկայացնում: Իրականում նրանք իրենց ձեռքն էին կենտրոնացրել ամբողջ իշխանությունը: Ю. В. Андреев, նշվ. ավանդույթային, էջ 6:

⁵⁷ Հասակակիցների, սեռա-տարիքային միությունների հարցի լուսարանման համար կարևոր է աղգագրական հարսանիքի ուսումնասիրությունը: Այն պահպանված, մինչև մեր օրերը հասած, փաստերով հարուստ, համայնքային, ծխային, պաշտամունքային ու կենցաղային մի արարողություն է, որն հատուկ նշանակություն է ունեցել հասակակիցների միությունների և այլ աղգագրական հարցերի լուսարանման համար:

Ախալցխայի շրջանի Սուֆլիս գյուղի բնակչուհի Ա. Իգիթրաշյանը պատմում էր, որ կանացի գործերի համար կնիքմարդօց մաջի էր լինում: Երբ մեկի տանը խմոր անելու, հաց թխելու, էփշտա կարելու, կորկոտ սարքելու, խսիր գործելու, թիւ մանելու, քեշա թափելու, տուն սաքելու, բուրգ գգելու, թոնիր թաղելու կամ կալ, եղան անելու, հացահատիկը քամուն տալու և նման գործեր լին լինում հարևան և ազգական կանայք հափաքվում էին օգնության: Կանանց մեջ փոխադարձ օգնությունն անվճար էր, բայց հատուցվում էր լավ հյուրասիրությամբ:

Բացի փոխօգնությունից, տնտեսության մեջ կտնայք պահպանել են նաև իրար մթերքներ փոխ տալու սովորությունը: Փոխ աալու ամենաաարածված սովորությունը կոչվում է խաբ: Կտնայք կովերի ու ոչխարների կաթը միացնում են և հոթթով գործածում՝ օրը մեկը: Խաբը կաթնամթերքի արագ կուսակման հնարավորություն է ստեղծում:

Պառավ և միջին տարիքի կանանց հասակային խմբերը հնում ունեցել են կարևոր պարտականություններ և իրավունքներ:

Հարսանիքներին և աարբեր տոներին այդ խմբերը սասնակցել են իրենց հառուկ պարականություններով: Մինչև հիմա էլ պահպանվել են արարողություններ, պարեր և թատերականացված գործողություններ, որոնց կատարողները միայն պառավ և միջին տարիքի կանայք են:

Աղջիկ ե ե ե ի հ ա ս ա կ ա յ ի ն մ ի ու թ յ ու ն ե ե ռ . — Ջավախքում ինչպես ամուսնացած տղան այլևս չէր կարող վերադառնալ իր խաղընկեր ազաբների մոտ, այնպես էլ աղջիկը նշանվելուց հետո առժամանակ խզում էր իր ընկերական հարաբերությունները նախկին ընկերուհիների հետ:

Ագաբ աղջիկներին այդպիսով արգելված էր (նախկին tabou-ի մնացորդ) ամուսնացածների հետ ընկերանալ: Աղջիկները միշտ միասին մայլա-մայլա հավաքվել են խոսք ու զրույցի խաղերի ու պարերի:

Աղջիկների հասակային միությունները հառուկ օդա կամ հավաքաաեղի չեն ունեցել: Միության անունը հայանի չէ: Աղջիկների միություններն իրենց միջից ընտրված ղեկավար չեն ունեցել:

Ջավախքում նրանց հիմնական հավաքատեղին աարիքով ու խելացի մի կնոջ առուն էր, որին ընտրում էր հասարակությունը, հաշվի առնելով նրա բարոյականությունը, խելքը, գիտելիքներն ու

շնորհքները: Հրավիրել են, վարձատրել տղ կնոջը, որպեսզի նա աղջիկներին սովորեցնի՝ գրել, կարդալ, կարել, գործել, հյուսել, ասեղնագործել, երգել ու պարել:

Նա րացատրել է քաղաքավարության ձևերը, մեծերին հարգելու անհրաժեշտությունը: Պառատվորվել է իրեն վստահած աղջիկներին դարձնելու շրջապատող հասարակությանն համապատասխան անդամներ:

Բացատրել է հասակային մեկ շրջանից մյուսին անցնելու հետ կապված հասունության ընական օրենքները:

Այդ կինը իր սաների ամուսնության ժամանակ կարևոր պարտականություններ էր ստանձնում: Նա իր սաներին հետևում էր մինչև ամուսնական առաջատը, րացաարում ամուսնություն հետ կապված ֆիզիկական փոփոխությունները և կնոջ պարականությունները: Նրա ներկայությունն իր սաների հարսանիքում համարվել է պարտադիր: Նա միաժամանակ արժանացել է մեծ պատիվների ու նվերների: Վերջինս րացատրել է նաև ավանդական արարողությունների նշանակությունը: Նա յուրահառուկ և ինքնատիպ ռեմուհու կերպարի մնացորդ է. որի պարտավորությունների մի խղճուկ մասն է միայն պահպանվել ու փոխանցվել մեզ:

Աղջիկների հասակակիցների միությունների համար հավաքաաեղի համարվել են նաև ջատ աշխատանք ունեցող աները՝ մնջեստանը: Ագաբ ախըրգեհը իրար հանդեպ փոխադարձ օգնության պարտավորություն են ունեցել, որը կրել է ագաբ ախըրգեհանց մնջի ընդհանուր անունը: Երբ աղջիկներից մեկը կամ թաղի ու գյուղի որևէ ընտանիք օգնության կարիք է ունեցել մանած մանելու, բուրդ գգելու, ցն՝ օլբեղելու, լագուտ, շախգուս խտրգելու, խսիր, քոց, գուրբա, մնս գործելու, ջուր բեղելու և այլ գործերում, հավաքել է գյուղի կամ թաղի ագաբ ախըրգեհանց: Աղջիկները իրար իմաց տալով, որոշված օրը եկել են գործ ունեցողի տուն, նրան օգնելու:

Գարնանը, ամռանն ու աշնանը աղջիկները դուրս են եկել դաշաեր, յայլաներն ու թմբօցներ, մոտիկ սրբավայրերը, բուրֆի գոմերը, ջրերի ու արդերի ֆանաերները, աղբերների բոլորը, բրօերի գլխը, տնկի էրթեսաանը⁵⁸:

Այսպիսի հավաքներին ու մնջիներին մասնակցել են և տղաները:

⁵⁸ Հայաստանի ազգագրական այլ շրջաններում սա կոչվել է կաեալ կօխէ: Այս տեղի է ունեցել կաեալ-կաեմի կիրառիկներ:

ծթե աղջիկների մանչի գնացած տանը աղան-
բի հասար համապատասխան գործ կար, ապա
նրանք ևս հավաքվել են աղջիկների հետ, իսկ
էթե ոչ ապա նախօրոք իմանալով աղջիկների
տեղը, գնացել են այնտեղ, երգելով, կառակելով
ոգեորել աղջիկներին: Աշխատանքն ավարտելուց
հետո տանտիկինը նրանց բոլորին հյուրասիրել է
լըթիքով կամ քաղցրեղենով: Երգն ու պարն այս
հավաքություններից անպակաս է եղել: Հնում երգն
ու պարը ունեցել է նաև գործի հաջողությունն
ապահովող հմայության նպատակ:

Ջավախքում այսպիսի հավաքների ժամանակ
պարել են խաղ ըսելով (առանց զուտնայի), միայն
զավալն է⁵⁰ ձայնակցել երգողներին:

Այս փոխադարձ հանդիպում-հավաքները հնա-
րավորություն են տվել աղջիկներին ու տղաներին
իրար աեսնելու, ճանաչելու, հավանելու, սիրա-
հարվելու, որն ավարավել է օրինավոր սովու-
նություններ, աղջիկ փախցնելով, երբեմն էլ ունեցել
է ողորդական վախճան:

Աղջիկների հասակային խմբերն ակտիվ մաս-
նակցություն են ցուցաբերել տարեկան առներին,
հատկապես Բաբեկէնդանին, Կանայ ու կարմիր
կիրակիներին, Կաթնապրի օրը (Համարածում),
Վարթէվօրին ու հարսանիքներին:

Հարսանիքն իր մեջ ընդգրկում է ոչ միայն
հասակային մեկ շրջանից մյուսին անցնելու հա-
մար հասաատված օրենքներն ու նվիրատվական
ծեսերը, այլև պաշամունքային ու հասարակա-
կան այնպիսի երեույթներ, որոնց պեաք է պար-
տադիր կերպով մասնակցելին հասակակիցների
սեռա-աարիքային բոլոր միությունների բոլոր ան-
դամները: Հարսանիքներում միությունների յու-
րաքանչյուր անդամ իր պարաավորություններն է
ունեցել ամուսնացող զույգերի հանդեպ:

Ինչպես քաղվօրին մակարէրը, այնպես հար-
սին ազաք ախչըգէրը շրջապատելով, իրենց միու-
թյան անդամին հարսանեկան արարողություննե-
րով հանձնում են պսակվածների միությանը,
միաւամանակ ծառայում նրանց, վերջին պար-
ականությունները կաարելով իրենց ընկերոջ
ու ընկերուհու հանդեպ:

Կանանց ու աղջիկների սեռա-տարիքային
խմբերը ժամանակին հասարակական կյանքում

Այս մասին տեղեկություններ հաղորդել են՝ Մուրումս՝
Մ. Պողոսյան, Խանդո՝ Ա. Թումասյան, Գանձա՝ Կ. Վարձե-
յան, Սուֆիս՝ Ա. Իգիթրաշյան:

⁵⁰ Ղավալը Ջավախքում փայտից պատրաստված սրինգ
է, շատ պարզ կառուցվածքով:

իրենց կարեոր ու նշանակալից տեղն ունենին:
Ժիշտ է, չի նաորոն հաւան շառնել այն հանգա-
մանքը, որ կանայք ու աղջիկները գյուղի քաղա-
քական կյանքում որոշակի դեր չեն խաղացել,
սակայն դրա փոխարեն կարեոր է հղել նրանց
գործունեությունը տնտեսական, ապա և հոգեոր
մշակույթի պահպանության հարցում: Նրանք
պահպանել ու սերունդներին են փոխանցել նաե
մի հասակային շրջանից մյուսին անցնելու հինա-
վուրց ծեսերն ու սովորությունները, տնտեսույթյան
հետ նապագած աշխատանքային իմացությունն ու
հմտությունը:

2. ՊԱՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵՂԸ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Պարերը, երգերը, խաղերը, մրցումներն ու
թատերական ներկայացումները Ջավախքում տե-
ղի են ունեցել՝ բացօթյա ե կտուրի աակ, այսինքն՝
շենքերում:

Բացօթյա վայրերից շաաերն ընտրվելուց հետո
մի փոքր հարթեցվել են: Որպես բացօթյա հրա-
պարակներ ժողովրդի համար ծառայել են՝

1. Դյուղական ու քաղաքային հրապարակներ՝
ա. Գյուղամէշ⁶⁰,

բ. Զիլիթմէշ⁶¹,

2. Եկեղեցիների ու մենաստանների բակերը
կամ նրանց մոտ եղած բաց, ազատ աարածու-
թյուններ:

3. Ուխտաաէղէրի կամ սրրավայրերի մոտ
ընկած հարմար տարածություններ:

4. Գէրէզմընօցի կամ հաեգսաաբանի պուր,

5. Գյուղական տների դռներ⁶² ու էրթլստանը
(տե՛ս նկ. 3):

6. Բացօթյա հրապարակներ են դարձել նաե
ղեպի եկեղեցիները, գերեղմանատները և հրապա-
րակները տանող ճանապարհները, այնուհետև
քմբօցները, ախպրների բօլօրը, ադէրի ու ջրէրի
ֆանառները, Բէշէրի գլօլսնէր⁶³ ու դաշաերը:

Գյուղամէշ կոչված հրապարակները համեմա-
աաբար փոքր են բազմամարդ հավաքների հա-

⁶⁰ Գյուղամէշը գյուղի կենտրոնն է. որտեղ սովորաբար
կառուցվում են հասարակական նշանակություն ունեցող շեն-
քերը:

⁶¹ Զիլիթի, Զիլիթի, սակասաաադր ու ձիարշավի տեղ:

⁶² Ախալցխայում (քաղաքի հին մասում) և շատ գյու-
ղերում երբ գյուղը կառուցվել է սարալանջին կամ բլուրի
վրա, աները կառուցվել են այնպես, որ առաջին տան կտուրը՝
Լըթիքը դարձել է բակ-դուռ մի քիչ վեր դանվող տան համար:

⁶³ Քրօլէրի գլօլս նշանակում է ծալոերի, բլուրների, սա-
րերի լանջեր:

մարտի Այստեղ հիմնականում տեղի են ունեցել փոքր սասշտարի խաղեր, սրբումներ ու ներկայացումներ (արջ, կապիկ խաղացնել)։ Գարնանն ու ամռանն այն Նստաբան է աղամարգակնաց հասակակիցների սիւթյունների համար։

Ձիլիթմէյդանէր գլուղական ու քաղաքալին ամենամեծ հրապարակներն են⁶⁴։

Հրապարակը կրկն է ձիլիթմէյդան, ավելի կտրւմ մէյդան անունն այն պատճառով, որ այնտեղ են կայացել Ձիլիթը կամ ձիլիթը՝ մականախաղերը, ձիարշավներն ու ձիամրցումները։ Խաչը ջուրը գրցելուն, րարէկէնգանին, Մեծ պասին, Ջադկին ե ուրիշ տոներին, այդ հրապարակներում տեղի են ունեցել նաև ըմբշամարտեր ու ըմբշամարտեր։ Մէյդանում են խաղացել նաև եկեղանի արջեր, կտպիկներ, ուղաեր և այլ կենդանիներ կամ նույն կենդանիների նման կերպարանափոխված մարդիկ։

Գտրնանը և ամռանը, հետագայում՝ ցանկացած ժամանակ, Ձիլիթմէյդանում խօրոգ, խօյ, գօմէշ և ուրիշ կենդանիներ են կռվեցրել։ Այստեղ կռույթներ են ունեցել լարախաղացները⁶⁵։ Մէյդան հրապարակները ծառայել են նաև ռազմական կրթութեան պատրաստութեան, մրցումների ու վարժութեան անցկացնելու նպատակներին⁶⁶։

Մինչև հիմա ժողովուրդը շարունակում է պարել մենաստանների ու եկեղեցիների ըակերում։ Բոլոր երթերի առաջին ու հիմնական կանգառները մենաստանների ու եկեղեցիների ըակերն են⁶⁷։ Հարսանիքի ժամանակ պսակադրութեան արարողութեանը կաարելու համար եկեղեցի մտել են միայն քավորը, քավորիկը, հարս ու փեսան, հարսնաքույրն ու հարսնեղբայրը, փեսայի եղբայրը, ապա և որոշ հաաուկ անձինք, իսկ պահապան մաղաբլօրէրն ու հարսանիքին մասնակցող մեծամասնութեանը մնացել է եկեղեցու ըակում և սպասել պսակի ավարտին։ Այդ ժամանակի ընթացքում գրսում մնացածները երգել ու պարել են եկեղեցու ըակում, հարևան աների երթիկներին կամ եկեղեցու մոտ եղած աղաա աարածութեան վրա։

⁶⁴ Ձիլիթմէյդանը մէմ ճիւղ վէց ճեկաաւ սէլէր. պօյը ճիւղ ճուրաւ մէր։ Մուրուտ՝ Գ. Ինշուան։

⁶⁵ Լարախաղացների պարտագիւր ու հիմնական խաղատեղ եկեղեցիների ըակերն են։

⁶⁶ Ձիլիթմէյդանում են կազմակերպվել նաև խաղ կռիվները, երբեմն էլ քարակոխները։

⁶⁷ Երթերը մենաստանների ու եկեղեցիների ըակերից հետո, հաճախ կանգ են առել գլուղի կամ քաղաքի հրապարակներում ու տների ըակերում։

Պարէր, մրցումներ, խաղեր ու թատերական ներկայացումներ տեղի են ունեցել սրբավայրերում, որոնք ընգհանուր անունով կոչվել են ուխտաաէղէր կամ ուխտավայրէր։ Այգպիսիները Ջավախքում շաա են։ Կան տեղական և համաշրջանային նշանակութեան ունեցող ուխտաաէղէր։

Տեղական նշանակութեան ունեցող ուխտաաէղէրը գտնվել են գլուղի ու քաղաքի մեշ կամ նրանցից ոչ հեռու։ Այս սրբավայրերն այցելել են կիրակի, երբեմն նույնիսկ լի օրերին։ Այգպիսի սրբավայրերից են Մ. Սամսարի Խաչ մաղաբան⁶⁸, Կաթախի օձաբաւն ու ս. Գէօրգը կամ օղլան վէրանը⁶⁹, Բաւալեթի ս. Հովնանէսը⁷⁰, Ախալքալաքի Տավշան թէփէն, բոլոր գլուղերի ու քաղաքների եկեղեցիները, նրանց ավերակներն ու այլ տեղերը։

Համաշրջանային նշանակութեան ունեցող ուխտաաէղէրն իրենցից ներկայացնում են մեհաստաններ, վանքեր, եկեղեցիներ, երբեմն էլ նույնիսկ ավերված զանգակատներ ու սրբերի գերեզմաններ։

Ջավախքում այգպիսիներից են ճգնավորի վանքը՝ Ախալքալաքի ձորում, Վաթնիք⁷¹ կամ Վաթնիք, Կաթնաշէթը կամ Բաթնաշէթ⁷², Թրմուկ բերդը, Մունգայի ու Գյումուրդուի եկեղեցիները, Ախալցխայի ս. Նշանը (որի կողքին 1861 թ. կառուցվել է ս. Վարդանի եկեղեցին), Կարապետ Սրբաղանի գերեզմանը և այլն։

⁶⁸ Մաղարա—քարայր։

⁶⁹ Տոնակատարութեան օրը Աս վածանի ե Վարգավառի երկուշարթին է։

⁷⁰ Տոնակատարութեան օրը Մախի 7-ն է։

⁷¹ Վարձիա— ճգնաւ վրացերեն նշանակում է վարդերի ամրոց։ Վրաց ասորեգիրներն այն կարծիքն են, որ Վաթնիքն հիմնադրել է Գեորգի Գ թագավորը (1156—1184), ավարակ նրա դուստր Թամար թագուհին (1184—1212)։ Կարծիքներ կան, որ այնտեղ է թաղվել Թամարը։ Սակայն դա ճիշտ չէ, որովհետև Թամարի դերեզմանը գտնվում է Գելագի վանքում։

Վարդան Բարձրաբերդու վկայութեամբ Վարձրան իր անունը ստացել է Երախտի ծառի ճիւղից շինուած ճոննաց սուրբ խաչից, որն այստեղ է աեղափոխվել VII դ., (Ս. Լալալեան, Նշվ. աշխ., էջ 12)։ Այս վկայութեանը ցույց է աալիս որ Վաթնիքն կառուցված է եղել Գեորգի Գ-ից ե Թամար թագուհուց շաա առաջ։ Ժանի որ տոնակատարութեան օրը կապվում է Վարդավառի հետ, իսկ անունը Վարդերի, դրախտի ծառի օլուր ու ջրի պաշտամունքի հետ, ապա ըսա ամենայնի, այն կապված է ջրի ասածո՝ Վարդի պաշտամունքի ե նրա պատվին կատարված տոնակատարութեանների հետ։

⁷² Կաթնաշէթ ու Վաթնիք սրբանեղերի աոնակատարութեան հատուկ ու տարածված օրը Վաթնիքի ղէրին է։ Այն շարժական է։ Սովորաբար ընկնում է հուլիս ամսի երկրորդ շաաթվա կիրակի օրը։

Հասարակական այցելությունները սրբավայրերի սովորաբար տեղի են ունեցել տվյալ տեղի, սրբի տոնի օրը, որի անունով հիմնվել է վանքը, մենաստանը, եկեղեցին կամ սրբատեղի մատուռը։ Տոնակատարության օր համարվել է նաև շինությունը սրբին նվիրարեցնելու օրը։

Շրջանային ուխտատեղեղներում հավաքվել են շատ գյուղերից։ Ամեն մի գյուղի ընակիչները տեղավորվել են առանձին-առանձին։ Յուրաքանչյուր գյուղ ունեցել է իր շաղբջիճների խումբը⁷³ (դա-վալ-գառնա) երգողները, պարողներն ու փայլե-վանները⁷⁴։ Այստեղ է, որ երգերի ու պարերի լավ կատարումը, շաղբջիճների նվագը, մրցումներում հաղթելը, գյուղը և անհատ կատարողին ղարձրել է ճանաչված ու պատվավոր ամրոգը շրջանում։

Այսպիսի համաշխարհային հավաքները կրել են դերի⁷⁵ ընդհանուր անունը, որը նշանակում է ուխտի գնալ, սրբատեղ գնալ։

Դերի գնացած տեղերում կատարվել են աշխարհիկ ու ծիսական պարեր, խաղեր, մրցումներ ու թափառական գործողություններ, կաղամկերպ-վել են ձիարշավներ, ձիախաղեր, փայլեվանի խաղեր, կենդանիների ու թռչունների կոկիվներ։

Թաղման երթերը, նախնիների հիշատակին նվիրված արարողությունները, թաղումներին ու մեռելոցներին ճանապարհներով անցնելով կանգ են առել Հանգստաբանի կամ գերեզմանների դու-գերում⁷⁶, որոնք փաստորեն մեծ, հարթ ու աղատ տարածություններ են⁷⁷։ Հնում մեռելոցներին⁷⁸ շի-

լիթը, ձիարշավն ու մրցումները այնտեղ են կա-տարվել, իսկ հետագայում ավելի շատ Զիլիթ-մեյդաններում, այն պարզ պատճառով, որ դեպի հանգուցյալն ունեցած վերարձմունքը ժողովրդական մտածողությունն ու արարողությունները, կապված հավատալիքների փոփոխման կամ ան-հետացման հետ, փոխել կամ ողնվել են իրենց նախկին նպատանագրումից ու բովանդակությու-նից։

Ջավախքում կիրակի օրերը կամ զարնները ցօրեց մեղեղ⁷⁹ ախյուգներն ու ազաբ մանչերը թօփ գրվելին էրթեստանը պար խաղալու⁸⁰։

Հարսանիքին նախորդող պատրաստություն-ների, ապա և բուն հարսանիքի օրերին պարերի, խաղերի ու մրցումների, թատերական գործողու-թյունների համար անդ օգտագործել են հարսա-նիքատեղերի տների ըագերը (տե՛ս նկ. 3)։ Քանի որ շատ գյուղերում տների ըակերը հարևանների կտուրներն էին, ապա և էրթեստանը։ Բագերն ու էրթեստանը պարատեղ են ղարձրել նաև այս կամ այն աանը յնագում էնելու գնացած ժամանակ։

Ջավախքում հավատում էին, որ հարսանիքի ժամանակ պարելով, հարս ու փեսային պահպա-նում էին⁸¹ շար ոգիներից, որոնց ընակություն տե-ղը այն ճանապարհներն էին, որտեղով անցնում էր հարսանեկան թափորը։ Չար ոգիներին ռվորն-գելու⁸² նպատակով պարել են նաև նախահարսա-նեկան օրերին, կեֆաճօր ու քավօրի տուն⁸³ գնա-լիս և ուրիշ ղեպերում։ Բուն հարսանիքին տղայի ծնողների տանից աղչկա ծնողների տուն, այն-տեղից եկեղեցի, եկեղեցուց աղայի ծնողների տուն, ճանապարհներին ու փողոցներում պարել են։ Այդ ճանապարհներն ու փողոցներն էլ հենց ղարձել են պարատեղ։ Բարեկենդանի օրերին գյու-ղի ու քաղաքի փողոցներով են անցել կատնավա-լները, վարդան Մամիկոնյանի տոնի հետ կապված և այլ երթերը, որոնք ուղղվում էին դեպի եկեղե-ցիներն ու հրապարակները։

Ջավախքում աղչիկներն օգտվել են կիրակի օրերին ղրոսանքի գնալու իրավունքից։ Գարնանը ղրոսանքների նպատակը կանաչ արորելն ու ծա-ղիկ հավաքելն էր։ Որպես նախկին հեթանոսական սրբավայրերի մնացորդներ, Ջավախքում կարևոր նշանակություն են ունեցել սարերի գագաթները, նրանց լանջերը, գետերի ափերը և այլ վայրեր։ Աղչիկներն ու աղաները առանձին-առանձին հա-

⁷³ Երբ գյուղը շաղբ չի ունեցել, միացել է հարևան գյուղին։

⁷⁴ Փայլեվան ասում են ոչ միայն լարախաղացին, այլ և փաղե վոդով խաղացողին, ըմբշամարտիկին և առհասարակ ուժեղ տղամարդկանց։

⁷⁵ Դերի՝ Ախց. Երուսալան տոնախմբություն, հանգես՝ խաղերով ու պարերով, ուխտագնացութեան կամ տոնական օրերու ժամանակ։ Հր. Անտոնով, Գառնական բառարան, այսուհետև ԱԳԲ. Երևան, 1913, էջ 273։

⁷⁶ Դերի (ասոր. daira, վանք (I, ուխտագնացութիւն քաղաքից դուրս՝ մի վանք կամ մի սրբավայր, որտեղ կաաար-վում են ժողովրդական հանգիստներ, II, վանքի կամ սրբա-վայրի տոնը, օրաւ ՄՀԲԲ, էջ 507։

⁷⁷ Դալգ-թրք. duz բառից, աափարակ տեղ, հարթու-թյուն։

⁷⁸ Ջավախքում բոլոր գերեզմանատների մուտքի մոտ, ճանապարհի վրա քարից հատուկ սեղան է պատրաստված, որտեղ դրվում է դագաղը, հանգիստ առնելու և որոշ արարո-ղություններ կատարելու համար։ Այն կոչվում է Ենեզգաթի քար։

⁷⁹ Հայտնի է, որ էարուկների մոտ, գլաղիատորական մրցումներն ու խաղերը տեղի են ունեցել գերեզմանաանե-րում, թաղումների ժամանակ։

⁷⁹ Ծօրեց մեղեղ—կեսօր, ավելի ճիշտ հետճաշ։

⁸⁰ Մղալթրիլա՝ վ Ավետիսյան։

⁸¹ Ջավախքում միշտ չէ, որ կնքահայրը հարսանիքի քա-վոր է դառնում։

վարվում էին կալերում⁸², դաշտերում ու անտառ-
ներում, տղոյուրների շուրջը, բլուրների դազաթ-
ներին, դետերի ու առուների ափերին, որտեղ պա-
լում, երդում ու խաղում էին:

Բացօթյա պարատեղերն ու տարրեր անսակի
դործողութունների վայրերը, հրապարակները,
կկեղեցիների, հնում մեհյանների բակերը, ուխ-
տատեղերը, գլեհգմբուցի դալգերը, սարալանջերն
ու պետափերը, տների դռներն ու էրթետանը փո-
ղոցներն ու ճանապարհները, անտառները և այլ
վայրեր պարատեղ են հանդիսացել հնագույն ժա-
մանակներից մինչև մեր օրերը: Քրիստոնյա հա-
յր, չհրաժարվելով հեթանոսական պաշտամուն-
քային պարերից և գործողութուններից, չի հրա-
ժարվել նաև նրանց կատարման տեղերից: Մեհ-
յանների քանդելուց հետո հաճախ նրանց տեղե-
րում կառուցվել են քրիստոնեական եկեղեցիներ,
մենաստաններ ու վանքեր, իրենց բակերով: Հե-
թանոսական սրբավայրերից շատերը ժողովրդի
հիշողության մեջ մնացել են որպես ուխտատեղեր:

Պարերի ու թատերական գործողութունների
համար հատուկ շենքեր չեն կառուցվել: Անհրա-
ժեշտության դեպքում եղածները հարմարեցվել
են: Այգալիսիներն են՝

1. Գօմէր (ան՝ս նկ. 1),
2. Գօմն օղանէր (տե՛ս նկ. 2),
3. ձիթանգները,
4. հացատները⁸³,
5. յազլըղները⁸⁴:

Ըստ ընդունված օրենքի, գերդաստանի տար-
րեր անդամներ ասան մեջ ունեցել են իրենց առան-
ձին բաժանմունքները, որտեղ և տեղի են ունեցել
հասակակիցների միությունների հավաքները: Այն
շինքերը, որոնք հարմարեցվել են պարերի, թատե-
րական գործողութունների ու խաղերի համար,
կոչվել են պարտեղ կամ խաղտեղ: Տերմինը
դրեթե մոռացվել է: Երբեմն, եթե մեկի առանձն
ուսնց լուրջ պատճառի շատ մարդ է հավաքվում,
սանտիրոջը ծաղրելու համար ասում են՝ ասունըդ
խաղատո՞ւն է, ինչ էս⁸⁵:

⁸² Կալերը լինում են արանի մոտ: Գյուղերում կալ անում
էին նաև ապարակ կառույցների վրա: Այդ պատճառով շատ
գյուղերում էրբեքին տոփակ կառույցն ասում էին կալ էրթիգ:
Մղալթրիլայում մինչև հիմա կալ անում են ոչ թե արանում,
այլ էրթիգներին, Ախալցխա՝ Մ. Ալրերայան:

⁸³ Հացատունը բաժանվում է բօճափի, որտեղ թռիկ է
թաղված և մատանի:

⁸⁴ Յազլըղ—yazlik (ցլ) թուրք. ամառանոցային տուն,
սամառանոց:

⁸⁵ Ախալցալաք, սամարցի Արուս և ուրիշներ:

«Գյուղի ամենագլխավոր զվարճութան վայրն
ու աղբյուրը հարսանիքներն են, որ կատարվում
են ղուտնայով սկսած զաթաթուխից (շաբաթ օրը)
մինչև չորեքշաբթի: Հինգ օր շարունակ դղրդում է
գյուղը: Հարսանիքը միայն հարսանգատից: հա-
մար չէ. այլ և գյուղի. պարում են անվերջ, կանաչ
կալերում լուսնյակ գիշերով, գոմերում ձեթի ճրա-
պով»⁸⁶:

Հարսանիքի նախապատրաստական ծեսերի.
ժամանակ պարում են համապատասխան փակ
շենքերում՝ գօմէրում, գօմի օղանէրում և հացտ-
տներում (թօնդրափի առաջ, որին հաճախ ատ-
լիս են մառան անունը): Քանի որ հարսանիքն
ամբողջ գյուղի համար էր, ապա բուն հարսանիքի
օրը փեսայի տան գօմը, իսկ եթե այն փոքր էր,
ապա հարևաններից ամենամեծ տան գօմը մա-
քըրվել է աղբից, չորացվել և հատկացվել պարու-
ններին: Գօմէրում են տեղի ունեցել ձմռան ամիս-
ներին կատարվող տոների առթիվ կողմակերպ-
ված պարերը, թատերական գործողութուններն
ու խաղերը:

Գյուղերի ամենամեծ գօմէրը հատկացվել են
նաև «Ղարագօզ» խաղացողներին (սովերների
թատրոնին), հեթաթասաց գուսաններին (աջուղ-
ներին): Գօմէրը որպես պարատեղ կամ խաղատեղ
օգտագործվել են բազմամարդ հավաքների ժամա-
նակ:

Որպես պարատեղ կամ խաղատեղ ծառայել է
և գօմի օղան: Որքան էլ մեծ լինեին, գօմի օղա-
նէրը խաղատեղ էին միայն ընթանեկան մասնա-
վոր հավաքների ժամանակ: Այգալիսի դեպքերում
նախօրոք երկու լայն ապաստաններ գրել են օղայի
ներքին սնփների վրա՝ մեկը՝ օջախի առաջ, մյու-
սը՝ մուտքի մոտ: Տախտակները միտցնելով սա-
փները ստեղծել են չընդմիջվող լայն ապաստակա-
մած, որի վրա պարողների շրջանը կարող էր
աղաա շարժվել ու պտտվել ինչպես կամենար:
Վերին սափներից մեկի (սովորաբար ձախ կողմի)
անկյունում նստում էին շալլըլիք:

Համագյուղական հավաքների համար խաղա-
տեղ դարձել են ձիթանգները, որոնք անցած դարի
գյուղի անասնաբնական համար մեծ նշանակութուն
ունեցող շենքերից էին: Այդ մասին ասում էին՝
«Ձիթանգը Ջսովախքի ժողովրդի համար այն կա-
րևոր կարիքները լրացնողներից մեկն է, ինչպես
ջրաղացը»⁸⁷:

⁸⁶ ԳԱԲ, 2. Մալխասյանի արխիվ, նշվ. ալրում, մաս դ.,
էջ 88, Ընդգծումը մերն է:

⁸⁷ ԳԱԲ, 2. Մալխասյանի արխիվ, նշվ. ալրում, էջ 107:

Արգեն ասվել է, որ ձիթանքը տղամարդ հասակակիցների միութունների մշտական հավաքատեղի էր: Երբ գյուղում միայն մեկ ձիթանք էր լինում, այն գտնում էր բոլոր տեսակի հավաքների, պարատեղիների ու խաղատեղիների կենտրոն:

Ձմռանը երբ հյուր են եկել աշուղները կամ «Ղարագոզ» խաղացնողները, այսպեղ է հավաքվել ողջ գյուղը:

Ջավախքի շատ գյուղերում մի քանի ձիթանք⁸⁸ է եղել: Դրանց մեջ ընտրություն է կատարվել: Մեծերը օգտագործվել են համագյուղական, իսկ փոքրերը մասնավոր հավաքների համար:

Կանայք և աղջիկները փոխօգնության գնացած ժամանակ հյուրասիրվել, ապա և պարել ու երգել են հացատեղում (տե՛ս նկ. 4), յազլըղենքում, թոնրափին կից մառաններում: Այս տները պարատեղի են եղել նաև երեխաների համար:

Ախալքալաքում և Ախալցխայում վերջին գրերում կառուցվել են հատուկ սրճարաններ, որոնք փոխարինել են որոշ հավաքատեղիների: Սրճարաններին տեղի բարրառող ասում են ղէյֆէխանա⁸⁹: Այսպեղ երգել ու պարել են, խաղեր խաղացել, ապա և աշուղներ ու «Ղարագոզ» խաղացնողներ հրավիրել:

Տարեկան առները Ջավախքում մեծ գեր են խաղացել: Նրանցում ընդգրկվել են ընտրության ղարթոնքի, անասնապահության, երկրագործության, բերքահավաքի, տնտեսական կյանքի հետ կապված հասարակական ու մասնավոր նշանակություն ունեցող բոլոր ղեպերն ու ընտրության երևույթները: Տոները տեղի են ունեցել աարվա որոշակի ամիսներին ու եղանակներին:

Պարերը, թատերական գործողությունները, տարրեր անսակի մրցումներն ու խաղերը տեղի են ունեցել հիմնականում տարեկան այս առների ժամանակ՝ Կաղընգին (Նոր ասրի), Խաչը ջուրը ցըգէլուն (Ջրօրհնեք), ս. Սարգսմին, Տէրընդէգին, Բարէկէնդանին, Մեծ պասին (Միջունփին, Մառգարաբին, Ջարչաբանաց շաբաթին), Զադկին, Մայիսի յօթին (Վարդերի ու ծաղիկների տոն), Կաթնապրի օրը (Համրարձում), Վարդէվօրին, Աստվածածնա աօնին, ս. Գէվօրգին և այլ փոքր մասնավոր ու խիստ անդական (առանձին գյուղերի ու սրբատեղիների հետ կապված) տոներին:

⁸⁸ Այստեղ գյուղում ամենամեծ ձիթանքը գտնվել է եկեղեցու մոտ Դարբինյանների ասանը կից: Այժմ ավերված է: Բայց կան և գործող ձիթանքներ:

⁸⁹ Ղէյֆէխանա—Ղահվէ, արարերեն kahve—սուրճ, խանա—տուն. սուրճ խմելու տեղ, սրճարան:

Բարէկէնդանի հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ ու կիրակի (բուն Բարէկէնդան) օրերին տեղի են ունեցել ամեն տեսակի մրցումներ, խաղեր, ձիարշավներ, թատերական գործողություններ, կառնավալներ կերպարանափոխությամբ, Ղէյնօրանէր, Վարգանանց տոնի հետ կապված երթեր. ներկայացումներ, խաղեր ու պարեր:

Մեծ Պասին տեղի են ունեցել համայնքալին, հասարակական ճաշկերույթներ գերեզմանատներում: Բոլորը տանից գերեզմանատուն բերած ու տանիքները ղրել են մեկ ընդհանուր սեղանի վրա⁹⁰, կերել և իրար հյուրասիրել են: Ճաշկերույթի ընթացքում և հետո գյուղի երիտասարդությունը մրցումներ ու մենամարտեր, ձիարշավներ ու ձիախաղեր է կազմակերպել գէրէգմընօցի կամ հանգըսաբանի դուզ կոչված տարածության վրա, նվագել են, երգել ու պարել⁹¹:

Հնում այսպիսի հասարակական ճաշկերույթներին նախօրոք, ամրողջ գյուղը փող կամ մթերքներ է հավաքել, գնել ու մորթել է մեկ, երբեմն նույնիսկ մի քանի եղ: Բացի համայնքալին ճաշկերույթներից, եղել են նաև գերգաստանական հավաքույթներ: Յուրաքանչյուր գերգաստան հատուկ որոշված մէտէլօցի⁹² օրը գնացել է գէրէգմընօց, իր հանգուցյալին այցելության, հետո անելով ուտելիքներ ու խմիչքներ⁹³, որոնցով հյուրասիրել է իր գերգաստանի անդամներին, բարեկամներին ու ծանոթներին: Այս ճաշկերույթներն ու հավաքույթները հնագույն ժամանակներից պահպանված, հասարակական, համահամայնքալին ճաշկերույթներ էին նախնիների հիշատակին նվիրված պաշտամունքի մնացորդ:

Ջավախքում «Զագկի առլի օրը հավգիթ կըուվըցնէլու օր է, յէրգրօրտ օրը գիլաշի օր է, յէրօրտ օրը շիլիթ կըխաղան»⁹⁴:

Երգեր, պարեր, մրցումներ, խաղեր ու թատերական գործողություններ տեղի են ունեցել նաև տարեկան տոներից գուրս, կապված կյանքի մասնավոր ու հասարակական երևույթների հետ:

⁹⁰ Սեղանը բաց են արել գետին փոված կարպասի վրա, սփռոցներին:

⁹¹ Գերեզմանատներում պարելու մասին տե՛ս Թաթս պարեր գլխում:

⁹² Մեռելոցի օրերը Ջավախքում հինգն են՝

ա. Խաչը ջուրը ցըգէլու էրկուշափտի, բ. Մեծ պասի էրկուշափտի, գ. Զադկի էրկուշափտի, դ. Համրարձում էրկուշափտի, ե. Աստվածածնա աօնի էրկուշափտի: Բայց կան և ուրիշ պըզզը մէտէլօց օրեր, որոնք ընդհանուր ընդլթ չեն կրում: Ախալցխա, Մ. Կուրանյան:

⁹³ Հնում խմիչքներ չեն ասրել գերեզմանատուն:

⁹⁴ Այստեղ՝ Գ. Դարբինյան:

կիրակի, երբեմն էլ սովորական օրերի երեկո-
ներին, ամռանը լայլաճեղքում տեղի են ունեցել
պարեր, երգեր ու խաղեր: Հարսանիքները տեղի
են ունեցել թե՛ տոներին և թե՛ տոներից անկախ:
Այն երգերի, պարերի, թատերական գործողու-
թյունների, մրցումների, խաղերի ու ծեսերի մի
ամբողջ կոմպլեքս է, պահպանված հնագույն ժա-
մանակներից:

Այսպիսով, երգերը, պարերը, թատերական
գործողությունները, մրցումներն ու տարբեր տե-
սակի խաղերը տեղի էին ունենում տարվա ըն-
թացքում իրար հաջորդող տոների, հարսանիքնե-
րի ու խառատեղեր՝ դէրի, յայլաճէր գնալու ժամա-
նակ, ապա և կյանքի մասնավոր՝ ընտանեկան և
հասարակական առիթներով: Այդ ամենով աշ-
խատում էին «ապահովել» տարվա ըարեհաջող
ընթացքը, իրենց նյութական կյանքը և առաջնու-
թյունը:

3. ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՍԵՌԸ, ՏԱՐԻՔԸ, ՔԱՆԱԿՆ ՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Ջալախքում գրեթե բոլոր պարերը կատար-
վում են փակ շրջանի դասավորումով, որի համար
էլ կոչվում են կյօր պարեր: Փակ շրջանը դարձել
է անհրաժեշտություն: Ժողովրդական մտածողու-
թյամբ փակ շրջանը պարողներին «ապահովում է»
լաբ ողիների ներխուժումից:

Ըստ մասնակցողների քանակի, պարերը հիմ-
նականում բաժանվում են երեք խմբի՝

1. Կյօր⁹⁵ փակ շրջանով, բաղաժամով մարդ-
կանց տարբեր դասավորումներով պարեր:

2. Հսկաս ղույդ կամ երկուսով,

3. Թափ⁹⁶ ֆէշաֆ⁹⁷ կամ մենտե:

Ջալախքում հիսունից ավելի տարիք ունեցող
տղամարդիկ և կանայք (բացի ծխական մի քանի
պարերից) պարերին չեն մասնակցում:

Կյօր պարերին մասնակցել են անսահմանա-
փակ թվով (հաշվուրավոր) մարդիկ: Պարողների
քանակը կախված է եղել նաև պարաձևի կաա-
րողական դժվարություններից: Եթե պարաձևն ու-
նեցել է բարձր թռիչքներ, կատարման արագ
տեմպ, ծնկածալ նստումներ և առհասարակ բարդ
շարժումներ, ապա պարի ճիշտ կատարումը պա-
հանջել է մասնակիցների թվի սահմանափակում:

⁹⁵ Բացի կյօր պարերից կան և կիսաշրջանով, շարքով և
ուղիղ գծի դասավորումով մի քանի պարեր:

⁹⁶ Թափ—թրք. tak—միայնակ, մեկ, միակ, ղույդ շու-
նեցող:

⁹⁷ Քէշաֆ—թրք. köçek (gi) տղա-պարող:

Դանդաղ տեսակ և պարող պարաձև ունեցող կյօր
պարերին կարող էին մասնակցել շատերը:

Կյօր պարերը հասապատասխան հմայական,
պաշտասունքային նպատակադրմանն ու բովան-
դակութիւնը բաժանվել են ըստ կատարողների
սեռի և ամուսնական վիճակի: Այդ բաժանմանը
հասապատասխան պարերը անվանվել են՝

էրիգմարդօց՝ տղամարդկանց,

կնիգմարդօց՝ կանանց,

ազաբնէրի՝ երիտասարդների (ամուրի տղանե-
րի ու աղջիկների),

տղօց՝ երեխաների,

խառը՝ այսինքն առանց սեռը, տարիքը, ա-
մուսնական վիճակը հաշվի առնելու:

Այրի կիս շամուսնացած տղամարդկանց ու
կանանց թույլատրվել է մասնակցել միայն խառը
պարերին:

Այրիներին առհասարակ արգելել են պարերին
ու դրական նպատակադրում ունեցող ծխական
արարողություններին մասնակցելու, իրենց այ-
րիությունը մյուսներին չվարակելու համար:

Երեխաներին արգելել են մեծերի հետ պարել:
Նրանք պարել են առանձին: Բացի մանկական
հատուկ պարերից, երեխաները կատարել են նաև
մեծերի հեշտ պարաձևերով կյօր պարերը:

Անցած դարի վերջերից կյօր պարերը սկսել են
կատարել խառը, առանց սեռն ու տարիքը հաշվի
առնելու, կատարողի ունակության ու ցանկու-
թյան համաձայն: Սակայն մինչև հիմա գրանցված
պարերի վերլուծությունը սեռի, տարիքի և ամուս-
նական վիճակի առանձնահատկությունները հիմա
կատարողների հնուց եկող ավելի հաստատուն ու
որոշակի կաղմ, որով բացահայտվում է պարի
հմայական նպատակադրումն ու ընթացողակու-
թյունը:

Օրինակ Հաբուի պարը կաաարել են միայն ա-
մուսնացած ղույդերը, հարսանիքի ժամանակ:

Բաբէլէնդաբի վերջին կամ Մեծ պախի առա-
ջին օրը, Մախոխապի պարը կատարել են ծե-
բունիները: Միայն տղամարդկանց պարեր են հա-
մարվել ռաղմական պարերը⁹⁸, կանանց մասնակ-
ցությունն այս դեպքում հազվադեպ է եղել:

Թատերական գործողություններին, ձիամր-
ցումներին, ձիախաղերին, դիմակավորված եր-
թերին, խաղերին ու հասարակական նշանակու-
թյուն ունեցող այլ կարևոր արարողություններին
մասնակցել են միայն ազաբ տղաները, որոշ դեպ-
քերում և ամուսնացած երիտասարդ տղամարդիկ:

⁹⁸ Այժմ պարում են խառը՝ տղամարդիկ ու կանայք:

Ս. Սարգսիւն, Տէրնդէզիւն, Կաթնապրի օրը, հարսանիքներին և այլ գեպքերում հատուկ ծեսերի, գուշակութիւնների, պարերի ու երգերի կատարողները եղել են ազաբ ախլըգէրը:

Պարերում ու թատերական գործողութիւններում սեռով ու տարիքով համաստատասխան կատարողների մասնակցութիւնը հնում կապվել է պաշտամունքի բովանդակութեան, սեռի ու տարիքի մագիկ ազդեցութեան հետ: Երբ համատալիքները սկսել են մոռացվել, խախտվել է նաև մասնակցողների սեռի ու տարիքի պայմաններին հետևելու ավանդույթի հանգեպ եղած խիստ հսկողութիւնը: Աստիճանաբար հաղթել է աշխարհիկ մտածելակերպը: Սովորաբար խառը կլօր պարերում շրջանի առկում կանգնել են միջին տարիքի տղամարդիկ: Նրանց հաջորդել են սլաքալած ու ազաբ աղաները, ապա կանայք և աղջիկները: Այսպես դարերի ընթացքում մշակվել է պարողների դասավորման հիերարխիա և ավանդական հասաատուն օրենքներ: Չնայած այն բանին, որ ինչպես հնում, այնպես և հիմա պարում են կլօր՝ փակ շրջանով, այնուամենայնիվ, շրջանում պարի սկիզբ՝ գլօխ համարվել է տղամարդկանց, իսկ վերջը՝ պօշ աղջիկների շարքը:

Դասավորման մեջ իրար կողքի կանգնելու և իրար ձեռք բռնելու իրավունք ունեին միայն ազգական տղամարդ ու կին, տղա ու աղջիկ:

Ջավախքում կան մի քանի պարեր, որոնք կատարվում են ոչ միայն կլօր՝ փակ, այլ իաց, կիսաշրջանի, դասավորումով, պահպանելով շրջանի կամ կիսաշրջանի գիծը՝ աղեղը: Մեղ հասել են նաև մեկ, երկու շարքով, ապա և ջարաեօվ՝ իրար ետևից կանգնած դասավորումով պարեր: Կան նաև վերադասավորումներ: Տարբեր դասավորումների և վերադասավորումների ժամանակ պարողները կատարում են $\frac{1}{8}$ և $\frac{1}{4}$ դարձեր, դրանք են՝

ա. իրանի շուրջ առանցքային դարձ աջ կամ ձախ շրջվելով: Առանց քայլելու հնարավոր է միայն 90° պաուզա:

բ. Պտույա իրանի շուրջ, գեպի աջ կամ ձախ կտտարվող քայլերի օգնութեամբ:

Առանցքային պտույտներ և դարձեր տեղի են ունենում թե մասսայական և թե քա՛մ պարերում:

Թէ տէղը սըխլաթ էղնէր՝ կլօր պարէի օրքէն է պար կըբըռնէյի⁹⁹, այսինքն պարել են նաև երկու, իրար մեջ շրջանների դասավորութեամբ:

⁹⁹ Սուֆլիս՝ Մ. Համարձումյան: Պատճառը սրայն տեղի նեղութիւնը չէ, հնում գոյութիւն են ունեցել նաև երկու իրար մեջ շրջանների դասավորմամբ պարեր:

Ջավախքի պարերում ելման գրութիւնը կողք-կողքի է. որտեղ կանգնում են լայն ու նեղ ընդհուպ մինչև ուսերով ու արմունկներով հպվելը: Պարերում մասնակցողների դասավորումները կարող են ընթանալ ուղիղ գծով և ոլոր-մոլոր (դիգզազներով):

Հնում պարերի անունների, նրանց բովանդակութեան ու ձևի մեջ սերտ կապ է եղել: Ուսումնասիրել հնագույն պարաձևերը նշանակում է ըացահայտել նրանց կառուցման բուն նպատակն ու բովանդակութիւնը:

Ջավախքում ամեն պար իր երգն է ունեցել. մոռացել են խօսկէրը և պարի տնունը, մնացել է միայն քայլերի անունները: Այժմ պարերի անունները տրվում են ըստ պարի վօղկէրի քանակի ու տեսակի¹⁰⁰: Նսւյն սկզբունքով էլ պարերը բաժանվել են խմբերի: Պարերի յուրաքանչյուր տեսակ սացել է տվյալ պարաձևը ճիշտ բնորոշող անուն: Ամեն մի պարաձև ընդգրկում է շատ անուն պարեր, որոնք իրարից տարբերվում են փոքր առանձնահատկութիւններով:

Ջավախքին հատուկ են հետևյալ պարաձևերը. Մէ վօղկ՝ դի-դի¹⁰¹ էրգուս մէ դիւ, մէգըմ մէ դիւ.

Երգու վօղկ՝ էրգուս մէ դիւ, էրգուս մէ դիւ. էրգուս սաղիւն¹⁰², էրգուս սօլիւն¹⁰³, էրգուս էս դիւ էրգուս ևն դիւ:

Իւէէ վօղկ՝ իչարաղլի¹⁰⁴. էրգուս սէ դիւ, մէգըմ մէ դիւ, վօղ գարգէլօվ.

Չօրս վօղկ. էրգուս սէ դիւ, Լիգուս սէ դիւ, վօղ գարգէլօվ:

Յէդ ու առաշ. մէգըմ առաշ, մէգըմ հէդ:

Տապփազ¹⁰⁵ պարէր այս ընդհանուր անունը կրող պարաձևի մեջ մտնում են հնագույն ծիսական մի քանի պարեր, որոնք պատկանում են՝

գուրան կամ դձիգ,

թարս կամ ձախ,

ծափերով ու նամփու պարերին:

Չնայած Ջավախքում ջուխտ ու քա՛մ պարեր անըմինների աակ հասեացվում են գուլգ ու կենտ

¹⁰⁰ Ախալքալաք, Սամսրցի Արուի:

¹⁰¹ Որոշ գիւղերում այս պարաձևը մանում է Յէդ ու առաշ պարաձևի մեջ:

Դի-դի, Բա՛ւ վօղկ, մէ վօղկ:

¹⁰² Սաղ—թրք. sag աշ:

¹⁰³ Սօլ—թրք. sol—ձախ:

¹⁰⁴ Իչարաղլի—իւէէ վօղկ թրք. ՍՇ—երև:

¹⁰⁵ Տապփազ տապակ, հարթ ու համասար իմաստով:

Պարաձևն այսպես կոչվում է քայլերի հարթ, համասար, որոշ իմաստով նաև աշ դնալու պատճառով:

պարհոր, այնուամենայնիվ, կլօր պարերից նրանք, որոնք էրգուս գնա, էրգուս դառնա էն, կոշիւմ են ջուխտ, նրանք որոնք էրգուս գրնա մէջ դառնա էն, բաբ¹⁰⁶:

Ջավախքում, հատկապես Ախալցխայում ու Ախալքալաքում մինչև հիմա պարերը կատարում են ավանդական հերթականութեամբ: Հնում կասարման հերթակտնութեան պահպանութիւնը պարտադիր է եղել: Այն կապված է ծիսակին, ավանդական, անխախտելի խաղացանկի կատարման ներքո պտնվող պարաձևերի պաշտամունքային ավանդների հետ: Հաշվի է առնվել պարերի հմայական ազդեցութեան կարեւորութիւնը, սեր-րաղան լինելը և կատարման դժվարութիւնները: Սկսել են պարզ պարաձև ունեցող ու հիմնակա-նում ծանր՝ դասադ պարերից, ավարտել բարդ ու թլթլիլ պարաձևերով:

1930-ական թվականներից պահպանվել է մի ուսույթի հերթականութիւն՝ Յէդ ու առաջ, Ածը մրտավ, Ջամբաւ ամի, էջմիածին, Քօն օղլի, Ազոտի, Լէփօ լէ, լէ և ալլն: Այս հերթականութիւնը ոչ պարերի սկիզբ է, ոչ ավարտ: Ինչ վերջ-ված է մեջտեղից:

Հնում ամեն մի պարաձև ու պարատեսակ կապվել է հմայութեան, սրբաղան արարողութեան կամ վիպական (պատմական) դեպքերի հետ: Այդ պատճառով պարերը կատարվել են միայն իրենց հատկացված ժամանակին և որոշակի նպատակի համար:

Հասարակական պարերը ըստ կատարման ավանդական օրենքների սկսվել են Սգօ պարերով: Նրանց բովանդակութիւնը կապվել է նախ-նիների ու հերոսների պաշտամունքի՝ հիշատա-կութեան հետ: Այնուհետև կատարվել են շօրօրա-ձեւ, ապա դուզ կամ աջ դնացող պարերը: Աջ ընթացող պարերը համարվել են հաջողութիւն ու երջանկութիւն բերող: Այդ պարերը կատարել են համաժողովրդական տոներին, բազմաթիւ մաս-նակցողներով, առանց նրանց սեն ու տարիքը հաշվի առնելու: Այդպիսի պարաձևերը կատարել են երկար, երբեմն ժամերով:

Հնում հասարակական պարերի զգալի մասն ունեցել է վիպական բովանդակութիւն: Պարի-րի բանավոր, երգվող տեքստերում պատմվել են նախնիների ու հերոսների սխրագործութիւն-ների, համայնքի, ցեղի, ժողովրդի, «պատմու-թեան» մասին: Ժամանակի ընթացքում պարա-ձևերը ձեռք են բերել նոր բովանդակութիւն: Պա-

րերգերի տեքստերի բազմազան բովանդակութիւ-նը տարբեր էմոցիոնալ տրամադրութիւններ էր հաղորդում միեւնոյն պարաձևերին:

Դուզ՝ աջ դնացող, նախնեւում վիպական բո-վանդակութեամբ պարերից հետո, կարելի էր կա-տարել արագ՝ թռիչքներով, ծափերով, վօդ զար-գէջով և այլ պարեր: Այդ անհնից հետո միայն թույլատրվում էր կրկնելու վիպական և որևէ այլ ժանրի ցանկացած պարը, բացառութեամբ Սգօ պարերից:

Հասարակական պարերը տեղի են ունեցել ժո-ղովրդական տոներին, ուրախութիւնների ժամա-նակ և հարսանիքներին:

Պարելիս դորժածել են բազմաթիւ առարկա-ներ, ճյուղեր, ծաղիկներ, նիզակներ, վահաններ, թրեր, ջահեր, մոմեր և այլ իրեր:

Հատուկ նշանակութիւն են ունեցել նաև իրար ձեռքերից բռնելու դիրքերն ու ձևը, ձեռքերի շար-ժումները: Ձեռքերի շարժումները եղել են արտա-հայտչական, նմանողական ու սիմվոլիկ:

Ժողովուրդը պարի շրջանը համեմատում է մարդու նշանքի հետ և այն համարում կյանքի շրջան: Կյանքի շրջանով դեպի աջ տեղափոխու-թիւնը ժողովուրդն ընդունել է որպես հաջողու-թիւն, լավութիւն, իսկ դեպի ձախ՝ ձախորդու-թիւն, թարսութիւն, անհաջողութիւն: Պարողնե-րի՝ դեպի աջ ու ձախ կատարվող քայլերի համա-դրութեամբ ժողովուրդն արտահայտել է կյանքի տատանումը, որպես հաջողութիւն ու անհաջո-ղութիւն, բախտավորութիւն ու դժբախտութիւն, շար ու բարու իրար հաջորդող երևույթների հա-մադրութիւն:

Կյանքի տատանումն արտահայտող տարրեր ուղղութիւնների ներքո, պարողների դասավոր-ման ալիքավոր շարժումները քայլերի տարբեր մեծութեան կամ քանակի շնորհիւ տեղի է ունե-նում պարողների դասավորման աջ կամ ձախ ըն-թացող ուղղութեան դերակշռութիւն: Գերակշռող ուղղութիւնը պարողների դասավորութեան ընդ-հանուր տեղափոխութիւն է: Դասավորման ընդ-հանուր գերակշռող անդափնայան ներքո կա-տարվող քայլերի ուղղութիւնները մասնավոր տեղափոխայաններ են: Մասնավոր անդափն-այաններ կապված է ընդհանուր գերակշռող ան-դափնայան հետ: Եթե ընդհանուր գերակշռող տեղափոխայանը աջ պետք է լինի, ապա նրա աջ ու ձախ տատանումների ներքո եղած ուղղու-թեան մեջ պետք է գերակշռեն աջ դնացող քայ-լերը, նրանց քանակի կամ մեծութեան միջոցով:

¹⁰⁶ Ալաստան՝ Բ. Մանասյան:

իսկ եթե պետք է ձախ գնալ, ապա մեծանում կամ տվելանում են ձախ գնացող քայլերը:

Կյանքի շրջանով դեպի աջ տեղափոխությունը ժողովուրդն ընկալում է, որպես դժգոհ, ճիշտ, ուղղագիծ, հարադատ ուղղություն: Աջ կողմին վերադարձնում են բարու հաղթանակ շարի դեմ, հաջողության առավելություն անհաջողության, ձախորդության դեմ:

Դեպի ձախ ընդհանուր գերակշռող տեղափոխությունը որակվում է որպես թարս, ձախ, տառացիորեն անհաջողություն, ձախորդություն, չորայնություն՝ ճշտի, հաջողի հակառակը:

Ընգնանալ, գերակշռող տեղափոխությամբ միայն առաջ ու ետ շարժում կլօր պարբերում հնարավոր չէ: Այն տեղի է ունենում աջ ու ձախ ընթացող քայլերի ղուդորդությամբ: Առաջ ու ետ շարժում կատարվում է կյանքի շրջանի շառավիղների ուղղությամբ, այսինքն պարողների կազմած շրջանից ներս ու դուրս:

Պարերում կյանքի շրջանի գիծը կարող է լինել ուղիղ, աղեղնաձև, ալիքավոր, շրջանաձև, անկյունավոր և այլն:

Ջալախքում ամենատարածված պարաձևը Ջօրս վօդկն է, որում կաարողների ընդհանուր, գերակշռող տեղափոխությունը դեպի աջ է: Պարի ընթացքում աջ կատարվող քայլերն ունենում են սովորական մեծություն, իսկ դեպի ձախ կատարվողները փոքր են սովորականից, կամ ձախ տեղափոխվելու փոխարեն կաարում են տեղն ու տեղը¹⁰⁷, երբեմն էլ վօդ խաղացնելով քայլեր:

Բնորոշ է նաև Իրէֆ վօդկ-ը, որի ժամանակ հաճախ քայլերն արվում են միայն աջ կամ միայն ձախ, որովհետև դարձող մեկ քայլը կաարում են անդում՝ մարմնի ծանրությունը մի ոտքից մյուսին տեղափոխելու, կամ վօդ խաղացնելու միջոցով:

Ջալախքին հիմնականում հատուկ են կատարողների դասավորման մասնավոր և գերակշռող տեղափոխությամբ դեպի աջ ընթացող պարեր:

Տարածված են՝ ՄԷ վօդկ, Իրէֆ վօդկ, ֆօն-օդլի, Յէդ ու առաջ, Հարսի պար, Ջամբար ամի, Թրտու Մախոյա գոլալու պար, Քօթանա, Ջան մարալ, Ճօշկ և այլ անուն ունեցող պարեր, որոնք արբեր դյուղերում և քաղաքներում կատարվում են միևնույն պարաձևով:

Թաֆ պարերից արածված են Խնգաձառին, Տանտրգին պարը, Որգանդարան, Ղալանդարին և այլն:

¹⁰⁷ Ծուռուտ՝ Գ. Ինչոյան,

Քայլերի թիվը կապվում է պարի հմայական բովանդակության հետ (թվերի մագիա): Ջալախքում դրական կախարդության մեջ կարևոր են համարվել երեք, յոթ և նրանց բաղմայականումից սաացվող թվերը¹⁰⁸:

Ջուխտ ու Թաֆ պարերի հիմնական կաարողներն ալժմ աղջիկներն են ու կանայք: Ավալ ախալըգնէր բիթաուն կլօր կըխաղալին, Թաֆ պար միննագ մանչէրը կը խաղալին¹⁰⁹: Հնում որոշ Ջուխտ ու Թաֆ պարերի պարտադիր կատարողները միջին տարիքի, երեմն և էխալար տղամարդիկ ու կանայք էին: Ալժմ տղամարդուն առաջարկել Թաֆ պար կատարել, նշանակում է վիրավորել նրան:

Ջուխտ ու Թաֆ պարերն իրենց մեջ պարունակում են հնադույն տոտեմական, անիմիստական, առասպելական աստվածալիկ և ալ երեւակայական, ինչպես և մարդկային, հերոսական կերպարների մնացորդներ:

Վիպասանությունն ու առասպելը համարվել են տվյալ համայնքի ու ցեղի «պատմություն»: Նրանց «դործող անձանց կերպարները խաղացվել, այսինքն պարվել են առաջնորդների ու ցեղապետների կողմից, իսկ հասարակության ղեկը պարել է ժողովուրդը: Հետագայում վիպասանական, առասպելական պարերը հետզհետե կորցնելով իրենց հին բովանդակությունը և երգվող տեքստերը ձեռք են բերել նորերը և շարունակել ապրել, որպես համաժողովրդական՝ հասարակական պարեր: Մինչդեռ պարաձևերն ու նրանց քայլերի էությունը ենթարկվել է երկարատև կոնսերվացման:

4. ՊԱՐԱՇՈՒ ՊԱՐԻ ՊՕՁԻ ԵՎ ՊԱՐԻ ՂԵԿԱՎՍՐԻ ԴԵՐԸ

Արդեն ասվեց, որ կլօր պարերից բացի կան պարեր, որոնց ժամտնակ շրջանը չեն փակում¹¹⁰: Այսպիսի պարերում դասավորվում են կիսաշրջանով¹¹¹ կամ ուղիղ գծով, որոնց ծայրերից առհեում կտնգնում է Պարբաշին¹¹², Պարի գլխը կամ

¹⁰⁸ Եթե թիվը համարվում է կույս, անծունդ, Բաղդիր Ջալաղեան լեզուի, Կ. Պոլիս, 1844, էջ 375: Եթե հին ժամանակից ի վեր համարվել է խորհրդանշող, սրբազան թիվ՝ Հանդիսանում է կատարելության սիմվոլ, ՄԲ. Հ. 1, էջ 606:

¹⁰⁹ Ծղալթրիլ՝ Ս. Պողոսյան:

¹¹⁰ Դրանք չրսականում ապափազ պարերն են, որոնց թվում են նաև ճամվու ու քառս պարերը:

¹¹¹ Աղեղնաձև կամ պարպանում են շրջանադիր:

¹¹² Պարբաշի—պարը ղլխավորող Հ. Ս. Մկրտչյան, Կարևոր բարբառ, Երևան, 1952, էջ 173:

Յալի բաշին, իսկ վերջում՝ Պարի պօշը:

Հասարակական պարերի և հարսանիքների ժամանակ անհրաժեշտ էր մեկը, որ պարաշարքը ասներ իր հեռակից, ղեկավարեր պարի ընթացքը, պարաձեռն ասարեր մասերին անցնելը, հետևել շարժումների ճշտությանը, ուղիներ, կատարման անմային, հրաշքոգությանը, պարաշարքի ընդհանուր գեղական տեղափոխությանը¹¹⁴ և այլն:

Բոլոր պարողները պետք է տեսնեին Պարաշարուն, հեռանալու նա կանգնում էր կիսաշրջանի կամ շարքի գլխին¹¹⁵:

Սովորաբար տղամարդկանց և խառն պարերում Պարաշարի կարող էին կանգնել միայն տղամարդիկ, Կինը, աղջիկը Պարաշարի կարող էր կանգնել, իր պարը կատարում էին միայն կանայք և աղջիկները: Երբեմն, եթե կանանցից մեկը օժտոված էր հրաշքով կամ պարելու արտակարգ ուղանդով և ընդհանուր հարգանք էր վայելում, նրան թույլ էին տալիս Պարաշարի կանգնելու և խառն պարերում:

Պարի պօշը ես պետք է լավ պարողներից լինեիր, սրտեղծի պարաշարքի հակառակ ժաշարում կուրողանար հետևել պարի դասավորության պահպանմանը, կատարմանը և այլն: Պարի պօշ կանգնել են միայն տղամարդիկ, բացառությամբ կանանց պարերի: Պարի պօշը առհասարակ կարևոր դեր է կատարել, սակայն Զավախքում փակ՝ կլօր պարերի մեջ աստիճանաբար նվազել, ապա կորցրել է իր նախկին նշանակությունը: Պարի պօշի դրություն, նրա պարականությունների կարևորության մասին վկայում են շաղբիներին ու մանք¹¹⁶, Պարի պօշ կանգնողը պետք է լինի լավ պարող և ոչնի պարաշարուն:

Բիթաուն պարերում մեջ մի լավ խաղցող կըլնէր, օր նրա վոդիկն ճէդէվէյին, թէ ինչքա խաղան: Դժվար պարերին ավելի շաղ կընայէյին¹¹⁷:

Սա ցույց է առնում, որ փակ՝ կլօր պարերում ևս եղել են Պարաշարի և Պարի պօշ: Սակայն այս ղեկավար դիրքը դարձել է անհամար, որի պատճառով կլօր պարերի ժամանակ Պարաշարին փոխել է իր տեղը, անցել շրջանից ներս և դարձել

¹¹⁴ Յալի բաշի—yay-աղեղ, աղեղնաձև, yayli-աղեղով գինգած, hias-դուխ, դիտավոր, ավաղ, ղեկավար, պարի դասավորումը համեմատվում է աղեղի հետ: Համապատասխանում է նաև Պարի ղեկավար անունի իմաստին:

¹¹⁵ Այս մասին մանրամասն բացատրություն տես՝ զուլա լորրորդ, էջ 59:

¹¹⁶ Ախալքալաթի՝ Սամսրցի Արութ:

¹¹⁷ Ախալքալաթի՝ Սամսրցի Արութ. Ալասաան՝ Հ. Մածուրյան:

¹¹⁸ Ախալքալաթի՝ Սամսրցի Արութ:

Պարի ղեկավար: Հնարավոր է նաև, որ Պարի ղեկավար գոյություն ունենար անկախ Պարաշարից: Աստիճանաբար Պարաշար և Պարի պօշ պարականությունները փոխանցվել են Պարի ղեկավարին, որի իրավունքները դարձել են անսահմանափակ: Պարաշար, Պարի պօշի և Պարի ղեկավարի պարականություններն են՝

հեռանալ պարողների դասավորմանը.

ղեկավարել պարողներին.

նշան տալ շաղբից սկսելու, արագացնելու կամ դանդաղեցնելու, ապա և ավարտելու տարր:

Հետևել պարերը կատարելու հերթականությանը. եթե պարում են երգելով, ապա պարաշարի էին անձամբ երգել կամ ղեկավարել երգողներին:

Հետևել պարերի ընդհանուր գեղական տեղափոխության ուղղությանը, պարաձեռն, պարալին ֆիգուրայի ու քայլերի ճիշտ կատարմանը, ապա և ձևերի ճիշտ ընդհանուր ու շարժմանը:

Պարերն ավարտելիս Պարի ղեկավարը պարաշար էր շրջանը կտրել, որ մարդիկ իմանային, թե պարն ավարտվել է: Պարը կտրելուն ասում են կըղընված: Երբ պարի կըղընվածքը չի օգնում ղեկավարը հեռացնում է շաղբից: Այս ղեկավարը արդեն պարերն ավարտվում են, ասում են՝ պարը փրս էղավ՝ վերջացավ: Երբեմն էլ, երբ պարողները համառում են, ասում են՝ պարը փայցոստ արեմ¹¹⁸, այսինքն Պարի ղեկավարն իր ձեռքի փայտով շրջանը կտրում է, որից հետո պարերը պետք է ավարտվեն:

Պարի ղեկավարը պետք է լինի պարավար, ուժեղ անհատականություն, սրամիտ, կատակասեր, հմուտ կարգավորող և լավ (տաղանդավոր) պարող անձնավորություն¹¹⁹:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Պարի ղեկավարը այս ամենն անում էր փայտը ձեռքին: Այժմ դժվար է ասել, թե այդ փայտը ինչպիսին է եղել հնում, որովհետև հիմա նրա ձևը որոշակի նշանակություն չունի: Բոլոր անսակի ձեռնափայտերը, ծառից կտրած ճիպոտները կարող են դառնալ Պարի ղեկավարի ձեռքի փայտ: Հնում հավանաբար այն ունեցել է որոշակի ձև և կարևոր նշանակություն, ինչպես, օրինակ, կուբաշիներին մոտ: Կուբաշիներին ղեկավարի՝ մանդուշի փայտը դարձել է տարեգրական մի իր, որն, ըստ երե-

¹¹⁸ Մուրում՝ Գ. Ինչոյան: Հարսանիքներում Պարի ղեկավար հաճախ կըղընվե՝ դարձել՝ քավորը, որը և պարը փայցոստ է արել:

¹¹⁹ Ինչպես կուբաշիներին մոտ աղաղների միության ղեկավար մանդուշը, E. M. ՄԱՆԱՔԱՆԶ, «ԶԳ. աշխ., էջ 181:

վուրթին, կրել է նաև նախնի մանգուշ՝ ղեկավար-
ների հմայական զորությունը¹²⁰,

Ջավախքում Ղէկավարի փայտի որոշ ֆունկ-
յիաներ համընկնում են մանգուշի փայտի ֆունկ-
դիաների հետ: Փայտի կարևորությունն ապա-
ցուցվում է սերմինների բացատրությամբ: Պարն
ավարտելուն ասում են Փայդուստ անէլ, որովհետև
Պարի ղէկավարը հինգ աչդ փայտով է կտրում
սլարի դասավորությունը և վերջ դնում սլարելուն:
Բացի դրանից, Պարի ղէկավարը փայտը ձեռքին
վախեցնելով է, որ հետևում է պարերի հերթակա-
նությանը, դասավորությանը, ընդհանուր, զերա-
կըշտող տեղափոխությունը (թարս չխաղալուն):
Եթե որևէ մեկը պարել չդիտենա կամ դիտավորու-
թյամբ ուղենա սլարը խառնել, ապա Ղէկավարն
անմիջապես իր փայտի օգնությամբ կարող կհրա-
վիրի կամ դուրս կհանի նրան:

Լիալաքալաքում և Ախալցխայում XIX դ. վեր-
ջերից պարի ղեկավարը փոխարինվել է հատուկ
հրավիրված պարերի ուսուցիչներով (тапчменс-
тер), որոնք բնագրական աշխատանք են կատա-
րել պարերի դասավորման և կատարման հերթա-
կանության հարցերում: Սակայն այդ փոփոխու-
թյունները մնացել են սոսկ եվրոպական սլարեր
ուղորդող քաղաքացիների մի փոքր խմբի մեջ և ոչ
մի ընդունակություն չեն դրսևել ավանդական, բուն
ծողովրդական պարերի մեջ:

Պարբաշին և Պարի ղէկավարը, այժմյան տն-
րինով ասված, ունեցել են պարերի դիրիժորի
պարտականություններ, իրավունքներ, դեր և
նշանակություն: Նրանց պարականությունները
հավանաբար նույն գոյություն ունեցած պարա-
պիտի, պարապետի, հանդիսագրի, հանդիսապե-
տի, բնագրող արարողապետի փոփոխված ու
վերաձևավորված պարտականություններն են:

Պարբաշուգ, Պարի աջից և Պարի ղէկավա-
րից բացի, պարերում կարևոր տեղ են ունեցել
նաև Չալըջիֆ: Նրանք են, որ խստորեն հետևել
են պարերը կատարելու հերթականության ճշտու-
թյունը: Չալըջիֆ ունեցել են նաև ղեկավարելու
պարտականություններ: Հասարակական պարերի
ժամանակ Չալըջիֆ շրջանի ներսում կանգնելով,
նվազելու հետ միասին իրենց տեղում պարել են՝
շարժումները հիշեցնելու, պարողներին օգնելու
նպատակով, հետևել են պարածների ճիշտ կատար-
մանը, դասավորումից հանել են վատ պարողնե-
րին ու խանգարողներին: Նրանց ամենախարկո-
ր պարտականությունը պարերի կատարման հերթա-

կանությունը հետևելն էր: Նրանք պարեղանակ-
ները նվագում էին առանց հերթականությունը
շփոթելու, մեկը մյուսի հետևից: Կրեք Սգո պարի
եղանակ չէր նվագվի հարսանիքի կամ ուրախու-
թյունների ժամանակ, իսկ ծիսական սլարերը,
միշտ պետք է կատարվեին իրենց տեղում և ժա-
մանակին:

Տրգոցը կամ Դավուլ գուռնէն պարի օրթւն
մըղնէն զը Լեիգմարդոցը քաւմէն զը: Պագի կը
պագահէր, օր կնիգմարդոցն է չաւմէն¹²¹:

Ջավախքում ամենասիրված ու հարգված երա-
ժշտական գործիքը Տիգն¹²² է եղել (տե՛ս նկ. 15):
Այժմ ազգայնէրը հաղվադեպ են: Տգին դուդահեռ
դոյություն է ունեցել նաև Դավուլ գուռնաւն¹²³:
Առտիճանաբար Դավուլ գուռնաւն դարձել է իշխող:
Այժմ էլ դրանք սովորաբար օգտագործված ու հարգված
երաժշտական գործիքներն են: Առանց Դավուլ
գուռնի հարսանիք չի լինում:

Բացի Տրգից ու Դավուլ գուռնից, Ջավախքում
գործածվել են նաև Դավալ, որը կոչվել է նաև
Ռուլուլ: Տեղացիների ասելով Դուլուլը յլլ ընգաձ
չալլի է: Գործածել են նաև Դաֆ, ճիճոն (Ֆա-
մանչա), Թառ, Կրտնետ, Զուրալ և այլ գործիք-
ներ:

Այսպիսով, Պարբաշու, Պարի աջի, Պարի ղե-
կավարի ու Չալըջոց ղեկավարության տոկայու-
թյունը վկայում է, որ նրանք նախկին ցեղապե-
տերի, համայնքի առաջնորդների, քրմապետերի,
քրմերի, կախարհների և այլ դեմքերի հաջորդներն
են, իսկ պարտականությունները նրանց ղեկավա-
րության մնացորդները:

Հետագայում նրանց պարտականությունների
և դերերի աստիճանական վերափոխումից Պար-
բաշին, Պարի աջը, Պարի ղէկավարն ու Չալըջիֆ
սաացել են նոր ֆունկցիաներ, իրենց դրսևորել
որպես էենցաղի նոր երևույթներ արտահայտող

¹²¹ Զաւմէլ նշանակում է նվեր խնդրել կամ հասարա-
կական ձեռք պատիվ տալ պարողներից ամեն մեկին առան-
ձին-առանձին: Նվագողը կանգնում, կամ մեկ ձեռք զրա-
նաւում է պարողի առաջ և նվագում այնքան ժամանակ, մին-
չև նվեր ստանա (նվերը միայն դրամով): Սովորաբար տղա-
մարդը նվեր տալիս է իր և կնոջ համար: Կնոջը ջուսմլ չէր
կարելի: Այժմ կնոջից եւ նվեր խնդրելը՝ ջուսմլը դարձել է
սովորական երեւոյթ:

¹²² Տիգ-տիգ պատրաստած երաժշտական գործիք:

¹²³ Դավուլ գուռնա ասելով հասկացվում է երեք հոգուց
բաղկացած խումբ, որի մեջ մտնում են գուռնաշին, զուլջին ու
դավուլջին: Դավուլ գուռնի և հայկական երաժշտական գոր-
ծիքների մասին Србуи Лисицкии, Старинные пляски и
театральные представления армянского народа, том I.
Ереван, 1958, էջ 139—157:

կերպարներ, նոր բովանդակութեամբ ու նպատակների հետապնդմամբ:

Ջավախքում պարերը կատարվել են երեք եղանակով՝ ձեռով, ծրր դուղը մեծ է եղել, իսկ երաժիշտները քիչ, պարողները բաժանվել են խմբերի՝

մեկ Տիգր կրչալէ՝ կրխաղալին:

մեկ Զուռնէ կրչալէ՝ կրխաղալին¹²⁴

մեկ է խաղ կրսէլին, կրխաղալին¹²⁵:

Հարսանիքներին, հասարակական ժողովուրդական ուրախությունների ժամանակ հիմնականում պարել են երաժշտական դործիքների նվագախումբերով: Մասնավոր դեպքերում, լի կամ կիրակի օրերին, հատկապես մաջի դնացած ժամանակ, ջահիրլը խաղ ըսէլով կը խաղային: Շատ մասը 'Լավսլով' Բուլսլով (շվի) կը խաղային¹²⁶:

Ըստ ասացողների՝ ամեն պար իրան հստակ լիւրգ է սունկէ¹²⁷: Պարերիս հրդիլ են՝ բոլորը միասին, երկուսն ասել են, երկուսը պատասխանել, կամ էլ երդիլ են դիտող ներկաները:

Ջավախքում, ինչպես և Հայաստանի աղյուսակային շատ շրջաններում ավելի շատ երգել են իրենք՝ պարողները, երկուսը ասել են, երկուսը դարձրել¹²⁸, Ընդունված է նաև այսպես. ոնկը երգում է տեքստի տողերը, իսկ խումբն առնելով դարձնում է կրկնակը: Երաժշտության կրկնակին ասում են Թափշուրմա:

Կրկնակը բաղկացած է լինում մեկ և ավելի տողերից: Եթե մեն միենուլն պարերդն ունենում է մի քանի կրկնակ: Այս դեպքում նրանք կրգվում են հերթականությամբ կամ համապատասխանեցվում տեքստի բովանդակությանը: Դրանից հեշտանում է բանավոր տեքստի փոփոխումն ու իմպրովիզացիան, ևսպա ե. նոր քառյակների ու տողերի ստեղծումը, որը կատարվում է հենց պարի ժամանակ: Այժմ Ջավախքում խաղ ըսէլով պարերը քիչ են: Առաջ նրանք ունեցել են և թուրքերեն տեքստեր: Վերաբնակությունից հետո թուրքերենի հետ շփում չունենալու հետևանքով լեզուն մոռացել են, այդ թվում և երգերի թուրքերեն տեքստերը: Պարերդերի բանավոր տեքստերն հնում, կապվելով պարի շարժական տեքստի հետ, ունեցել են խիստ խայտարաղիտ բովանդա-

կություն: Նրանք եղել են առասպելական, վիպական, քնարական, պաշտամունքային, ծիսական, ռադմական և այլ բովանդակությամբ: Մեզ հաջողվել է գրանցել պարերդերի տեքստերի փոքր կտորներ, ասացվածքների տեսք ընդունած երկատողեր, որոնք բռնազբոսիկ կերպով միառվել են իրար, հարմարեցվել: Այդպիսիներն այժմ րանավոր ու շարժական տեքստերի սինթետիկ հիմունքները խախտելով կատարում են միայն երաժշտական վոկալ ուղեկցության դերը:

Բանավոր տեքստերն այժմ քիչ թե շատ կապվում են միայն շրջանին հատուկ ծիսական պարերի կատարման հետ: Եթե պարաձևերը, պարիզանակները և նրանց հետ կապված պարտադիր պայմանները կոնսերվացվելով պահպանվել են մինչև մեր օրերը, ապա բանավոր տեքստերի մասին խոսելիս պետք է ասել, որ նրանցում համեմատաբար անփոփոխ մնացել են միայն կրկնակները: Հնում կրկնակներն իրենց մեջ պարունակել են սրբազան, հմայական, երգմանցուցիչ տարրեր: Կրկնակների որոշ մասը ևս հետադարձում կորցրել է իր երգմանցուցիչ բովանդակությունը և դարձել անհասկանալի: Դարերի ընթացքում բանավոր տեքստերը ձևով են բերել նոր բովանդակություն, որից կտրվել է նաև բանավոր տեքստի ու կրկնակի բովանդակության միջև եղած ներքին, օրգանական կապը: Այսպես, կրկնակները ևս դնավով դարձել են ինքնուրույն և անհասկանալի: Այժմ կրկնակները կորցրել են նաև իրենց հիմնական տեղը, այսինքն տեղափոխվել են երդից երդ. այնուամենայնիվ, կրկնակների ուսումնասիրությունը օգնում է բացահայտելու հնագույն պարերդերի բովանդակությունը:

• • •

Առկնական կարգերի հասաաաած նոր կենցաղը հայերի մեջ աստիճանաբար վերացրել է անհավատությունը, ազդային պարային ձևի մեջ խորացրել նոր՝ աշխարհիկ, բովանդակություն: Հայկական պարավեստը սկսել է ձեռք բերել նոր խմաստավորում, իր մեջ ներծծել է արդիական մտածելակերպի ու կենցաղի շատ տարրեր: Ներկայումս թե՛ դուղերում և թե՛ քաղաքներում հին պարաձևերն ու պարաանակները ստացել են դիվանագործական աշխարհիկ, ինչուցային բովանդակություն:

Քաղաքներում այսքան են օտար-կովկասյան պարեր՝ նվագարաններով, որովհետև այս պարերը պարերդեր չեն, այլ լոկ պարեղանակներ՝ հար-

¹²⁴ Գանձա՝ Ա. Բաղիշյան. 1958 էջ 139—157:

¹²⁵ Սուֆլիս՝ Գ. Իգիթրաշյան:

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ Սովորաբար երգողներից մեկը Պարաշին է լինում:

¹²⁸ Ախալքալաք՝ Լամարցի Արուս, Ախալցխա՝ Մ. Ալեքսանյան:

մարեցված մենապարի և զուգապարի, որոնք հալկական չեն»¹²⁹։

Անդրկովկասյան քաղաքներում ստեղծված համաքարական միությունների՝ եղբայրությունների ներքո¹³⁰ հնուց դոյություն են ունեցել արհեստր «պահպանող» և «զարգացնող» հմայական պարեր ու ծիսային արարողություններ։ Կորցնելով իրենց սկզբնական ծիսային ու հմայական նպատակադրումը հեաազայում նրանք ստացել են խնջույքային բովանդակություն։

Եղբայրությունների անդամները լինելով հայ, վրացի, օսեթ, աբխազ, հրեա, գաղստանցի և այլ ազգերի ներկայացուցիչներ, պարերին հաղորդել են իրենց ազգային տարրերը, որից նոր ստեղծ-

ված պարերը դարձել են բաղմաոճ և համակովկասյան։

Այդպիսի պարերը կորցնելով ազգային ոճը ձեռք են բերել նոր որակ և ստացել Կովկասյան կամ Ասիական պաբեռ անվանումը։

Դեռ XIX դդ. տարածված էին նաև եվրոպական, սալոնային պարերը, որոնք աստիճանաբար ընդօրինակվում էին գուղական բնակչության կողմից։

Վերջին տասնամյակներում տարածում են դաել նաև ամերիկյան պարերը։

Այս ևրևսլթները վսւլուց առկա են նաև մեր աղգադրական ուսումնասիրության աեղավալում՝ Ախալքալաքի ու Ախալցխայի շրջաններում։

Գրանցված պարերի ծագումը, պարատեսակն ու պարաձևը որոշելը հնարավոր է միայն նրանց շարժական տեքստերի վերլուծության, պատմական, լաղսւղրսւկտն, բանահյուաական և ալլ տղղեկուլթուներին ուսումնասիրության միջոցով։ Նրանցից շատերը համաշրջանային, ապա և համազգային նշանակություն ու տարածվածություն ունեն։ Շատ պարեր իրենց բովանդակությամբ և հետաքրքիր ձևերով դարձել են հալկական ժողովրդական պարային ժաուանդության լավագույն նմուշներ։

¹²⁹ Խոմիաուս, Հայ գեղջուկ պարը, «Հողվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941, էջ 55։

¹³⁰ Համաքարությունների և համաքարական եղբայրությունների ստեղծվելը Հայաստանում կապված է միջնադարյան քաղաքներում արհեստների զարգացման հետ։ Այս մասին՝ Բ. Ն. Առաքելյան, Քաղաքներն ու արհեստները Հայաստանում, IX—XIII դդ., Երևան, 1964, էջ 177—199։ Վ. Ա. Արամյան, Արհեստները Հայաստանում, Երևան, 1956, էջ 241—250։